



ISSN: 1829-1651



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՅԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՍԱՐԿԱՍՏԻԿ

«Փամփո՛ւշտ ալ չունիք»...

Այս հոդվածի վերնագիրը կարող էր ել լինել «Կանդալ-ների սկանդալը» կամ նման մի բան, քանզի վերաբերում է հայրենի մեր ոստիկանության ոչ պրոֆեսիոնալ լինելու հարցին, որը գալիս է դեռ սովետական անցյալից, ասենք՝ նախորդ դարի 60-ական թվականներից, այսինքն հին, տոկուն արմատներ ունի:

Փամփուշտ չունենալու պատմությունը այդ օրերին տարածված մի անեկդոտից, հնաբնակ հայաստանցիներին ծանոթ, եւ պատմում է ամեն ինչից դժգոհ, կյանքի պայմաններից օրնիբուն զանգատվող մի հայրենադարձի (այդ օրերի ժողովրդային խոսույթով՝ մի «ախպարի» մասին, որի անթույլատրելի վարմունքը գրավում է համապատասխան մարմինների (կրկին այդ օրերի խոսույթով՝ «օրգանի աշխատողների») ուշադրությունը: Որոշվում է վախեցնել «ախպարիկին», կազմակերպել կեղծ գնդակահարություն (ներկա օրերի կեղծ դատավարությունների նման): Կալանավայրում մարդուկին կանգնեցնում են դեմքը պատին, հետեւում՝ հրացանակիր ոստիկաններ: Կրակում են «խալաստոյ», առանց գնդակի: «Ախպարիկը», օրնիբուն իր կրկնած «այս չկա, այն չկա» տրտունջ-ներին նոր ապացույց գտնողի ոգեւորությամբ շրջվում է հետ ու ծաղրանքով գոռում. «Փամփո՛ւշտ ալ չունիք»...

Այս զվարճալի անեկդոտը, գուցե անհարիր մեթոդյա տխուր իրականության, հիշեցի մի քանի օր առաջ, նախկին վարչապետ Դովիկ Աբրահամյանի որդու՝ Արգամի եւ ավելի վաղ՝ նրա աներիորդ Գագիկ Ծառուկյանի ձերբակալությունների վայրագ տեսարաններին հետեւելիս:

Այսօր ներքին գործերի նախարարության, ոստիկանության, գլխավոր դատախազության, արդարադատության նախարարությունը, չորսն էլ կանանց կողմից, փաստորեն՝ հրաշալի քառյակի կողմից դեկավարվող, ամեն ինչ ունեն՝ անսահման փող, փամփուշտ, նույնիսկ՝ ամբոխի մեջ անսպասելիորեն պայթող լուսածայրային «Զարյա» հրթիռ, սպիտակ առյուծին քնացնելու փոխարեն սպանող սրսկիչներ, Ծառուկյանի հաստաբուն դաստակի «ռազմերին» չհամապատասխանող բազմաթիվ ձեռնակապիչներ (կանդալ), որոնք, ինչպես գլխավոր շեֆն է հանձնարարել՝ «ծելը գտեք», կօգտագործվեն հետզհետե:

Իսկ ինչ վերաբերում է այսպես կոչված մարդկային ռեսուրսին, հրաշալի կվարտետի հրամանի ներքո գործում են վախազդեցիկ դիմակավոր ԱԱԾ-ականների մի ողջ խումբ, բոլորն էլ քաջարի մարտիկներ, որոնք գիտեն շա՛տ գողտրիկ ձեւով հարձակվել յուրաքանչյուր հակա-նիկոլականի վրա, զգեստնել նրան ասֆալտի վրա, բերանքսիվայր պառկեցնել, մի քանի հոգով նստել վրան ու խիստ պրոֆեսիոնալ ձեւով իրականացնել ձերբակալման իրենց միսիան: Մի քանի շաբաթ առաջ նրանց հաջողվեց, կանացի կվարտետի համակարգված ջանքերի շնորհիվ, ծծկեր մանկիկին անջատել մորից ու վերջինին առաջնորդել արդարադատության տաճար: Բա՛բ:

Փառապանծ կվարտետը վերջերս դարձավ կլիմտետ, մանկական ազգանունով մի տղայի հավելումով: Անշուշտ դրանով բան չի փոխվի այնքան ժամանակ, քանի դեռ բարձր պրոֆեսիոնալիզմը կա:

Այդ պրոֆեսիոնալիզմը գալիս է Կոլիզեոմից, որի գլխավոր օթյակում բազմած մեթոդյա կայսրը զմայլված հետեւում է արեւնայում տեղի ունեցող արյունաշաղախ իրադարձություններին՝ եղբայրը եղբոր դիակի վրա, ուրիշներ՝ սպանված առյուծին պոչից քարշ տալիս, թռչող կոկորդիլոսին գրկած տանելիս, քիչ անդին՝ պատժվելու իրենց հերթին սպասող վիզները ծուռ մի խումբ մարդիկ...

Բարձրագույն պրոֆեսիոնալիզմը ուղղակի հորդում է մեթոդյա կայսրից, որին սիրատոչոր հայացքով հետեւում են մեթոդյա ամազոնուհիները, հատկապես նրա բթամատին...

Ուրեմն դառնանք բոլորին ասենք. մենք ամեն բան ունինք, նույնիսկ՝ Բուժ Մատ:

ՀԱՎՈՐ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ֆրանսիական թերթերը պահանջում են, որ Google-ը վճարի իրենց

Ֆրանսիայում տպագրվող մոտ 300 թերթ համատեղ բողոք է ներկայացրել երկրի մրցակցային մարմնին՝ Google ինտերնետային կոնցեռնի ԱԲ (արհեստական բանականության) այն գործառույթի վերաբերյալ, որը, լրատվամիջոցների կարծիքով, իրենց համար անբարենպաստ վիճակ է ստեղծում: Նշված գործառույթը նորություններն ու տեղեկատվությունը ցուցադրում է արհեստական բանականության կազմած ամփոփագրում, որը մասամբ հիմնված է թերթերի մատուցած լրատվության վրա: Օգոստոսի 12-ին վերոհիշյալի մասին ծանուցեց «Դոյչլանդֆունկը»՝ իրազեկելով հրատարակիչների պահանջի մասին՝ Google պետք է վճարի թերթերին: Ավելին՝ բողոքին միացած ֆրանսիական թերթերը պնդում են, որ ԱԲ-ի ամփոփագրերի ի հայտ գալուց հետո իրենց առցանց ընթերցողների թիվը զգալի նվազել է:

⇒3

Մեֆֆայի դաժնաժանական դաշինք

Թեհրանի դեմ ուղղված զսպման միջոց, թե՛ ներքին անվտանգության կառուցակարգ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Ակնհայտ է, որ Մեքքայում երեք կարելուր իսլամական տեղությունների միջեւ նոր պաշտպանական դաշինքը ստորագրվել է այնպիսի պայմաններում, երբ Իրանի եւ ԱՄՆ-ի պատերազմից հետո տարածաշրջանը կանգնած է անվտանգության նոր ճգնաժամի առաջ:

Թեեւ համաձայնագիրը պաշտոնապես ուղղված չէ որեւէ երկրի դեմ, դրա ստորագրման ժամանակը՝ Պարսից ծոցի երկրների՝ Իրանի հրթիռային կարողությունների եւ տարածաշրջանում ԱՄՆ-ի դերի վերաբերյալ աճող մտահոգությունների ֆոնին, անխուսափելիորեն ուշադրությունը սեւեռում է Թեհրանի վրա:

Օգոստոսի 7-ին Սաուդյան Արաբիայի, Պակիստանի եւ Թուրքիայի ղեկավարներն ստորագրել են նոր պաշտպանական դաշինք, որի համաձայն՝ «երեք երկրներից որեւէ մեկի դեմ ցանկացած զինված հարձակում համարվելու է հարձակում բոլոր երեքի դեմ»:



Դաշինքում Իրանը թշնամի չի ճանաչվում, եւ այն չպետք է նախապես դիտարկել որպես հակաիրանական դաշինք: Այնուամենայնիվ, որոշ վերլուծաբանների կարծիքով, դրա ուղերձը Թեհրանի համար բավական հստակ է:

Ստորագրման վայրի անվամբ «Մեքքայի համատեղ պաշտպանական դաշինք» կոչվող փաստաթուղթը կնքվել է այնպիսի իրավիճակում, երբ Իրանի դեմ պատերազմի վերսկսման վտանգը դեռ պահ-

պանվում է: Սաուդյան Արաբիան այս դաշինքում հակակշիռ է տեսնում Իրանի նկատմամբ, իսկ Պակիստանը՝ Զնդկաստանի: Թուրքիայի համար, սակայն, պատկերը մի փոքր այլ է:

Անկարայի տեսանկյունից մեծ տնտեսական ներուժ ունեցող եւ միջուկային կարողություններով օժտված երկրի ներգրավումը մեծացնում է Թուրքիայի զսպման հնարավորություններն Իսրայելի նկատմամբ:

⇒3

«Մեքքայի պաշտպանական դաշինքի»

ռազմաքաղաքական եւ դիվանագիտական հետեւանքները

Հայաստանի համար

Թուրքիայի, Պակիստանի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ ռազմաքաղաքական համագործակցության խորացումը կարող է փոխել ոչ միայն Մերձավոր Արեւելքի եւ Զարավային Ասիայի, այլեւ Զարավային Կովկասի ուժերի հարաբերակցությունը: Հայաստանի համար խնդիրը հատկապես զգայուն է, քանի որ այս երեք երկրներից երկուսը՝ Թուրքիան եւ Պակիստանը, տարիներ շարունակ հանդես են եկել Ադրբեջանի նկատմամբ ընդգծված աջակցությամբ, իսկ Անկարան շարունակում է չհաստատել Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ:

Պակիստանը երկար ժամանակ Հայաստանի նկատմամբ որդեգրել է առանձնապես ոչ բարենպաստ դիրքորոշում՝ այն մեծապես պայմանավորելով Ադրբեջանի հետ իր ռազմավարական հարաբերություններով: Եթե Իսլամաբադի ռազմական համագործակցությունը Անկարայի եւ Ռիադի հետ վերածվի ավելի համակարգված տարածաշրջա-

նային ձեւաչափի, կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ Ադրբեջանին աջակցող առանձին պետությունների շահերը սկսեն ավելի սերտորեն համադրվել:

Այս զարգացումը Հայաստանի համար վտանգավոր է ոչ այնքան այն պատճառով, որ ձեւավորվում է ուղղակիորեն հակահայկական դաշինք, որքան այն պատճառով, որ կարող է աստիճանաբար ստեղծվել քաղաքական միջավայր, որտեղ Ադրբեջանի դիրքորոշումը կստանա ավելի լայն իսլամական աջակցության քաղաքական շրջանակ:

Այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի Թուրքիայի դերը: Անկարան Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցն է եւ Զարավային Կովկասում հետեւողականորեն առաջ է մղում Բաքվի շահերին համահունչ օրակարգ: Եթե Թուրքիան միաժամանակ խորացնում է ռազմական եւ քաղաքական համագործակցությունը Պակիստանի ու Սաուդյան Արաբիայի հետ, ապա Ադր-

բեջանի համար կարող են առաջանալ իր դիրքորոշումները միջազգային ավելի լայն շրջանակներում ներկայացնելու լրացուցիչ հնարավորություններ:

Սակայն Սաուդյան Արաբիայի պարագայում Հայաստանի համար սխալ կլինի իրավիճակը դիտարկել զուտ «հակահայկական դաշինքի» տրամաբանությամբ: Ռիադը սեփական տարածաշրջանային եւ գլոբալ շահերն ունեցող պետություն է, եւ նրա արտաքին քաղաքականությունը չի սահմանափակվում Թուրքիայի կամ Ադրբեջանի օրակարգով: Ավելին, Հայաստանի եւ Սաուդյան Արաբիայի հարաբերություններում առկա է զարգացման զգալի ներուժ:

Հետեւաբար Երեւանի ռազմավարությունը պետք է լինի ոչ թե ձեւավորվող համագործակցությանը հակադրվելը, ինչը Հայաստանի համար իրատեսական չէ, այլ այդ երկրների հետ սեփական հարաբերությունների խորացումը:

⇒3


ԱՆԱՇԻՏ
ՇՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Գերմանալեզու լրատվամիջոցները՝ «Շպիգելը», n-tv-ին, t-online-ը, քնականաբար կաթոլիկական առցանց ԶԼՄ-ները (kath.ch, kath.net, katholisch.de եւ այլն) օգոստոսի 7-ին եւ հետագա օրերին անդրադարձան օգոստոսի 7-ին Վադարշապատի դատարանում Գարեգին Բ-ի եւ 6 այլ եպիսկոպոսների դատավարությանը՝ որակելով այն հայոց եկեղեցու պատմության մեջ «աննախադեպ»։ Domradio-ն վերնագիր էր դարձրել կաթոլիկոսի հանդեպ հայ ժողովրդի մեծ հատվածի վերաբերմունքը՝ «Ծափահարություն դատարանի բակում», իսկ մյուս լրատվամիջոցները դատավարության փաստն էին ընդգծել վերնագրում, ինչպես նաեւ շեշտել «արեւմտամետ կառավարության» եւ կաթոլիկոսի լարված հարաբերությունների գլխավոր պատճառը «ՌԴամերձ, Պուտինի ազդեցությամբ գործող ընդդիմությանը սատարելու» հանգամանքն է (նաեւ)։ Տեղի տղության պատճառով չենք անդրադառնա վերոհիշյալ հրապարակումներին, սակայն ծանուցենք, որ գերմանացի մի շարք իրավաբաններ ուշադիր հետեւում են դատավարությանը։ ԴՅ-ում չկա եկեղեցական հարցերով մասնագիտացած դատարան, եւ սա եվրոպական, միջազգային, մարդու իրավունքներով զբաղվող իրավաբանների համար հետաքրքիր է։

kath.net-ում դատավարությանն անդրադարձավ եկեղեցական, քրիստոնեական թեմաներով մասնագիտացած հեղինակ Միշայել Յեգեմանը (Michael Hesemann)։ «Հայաստանի կաթոլիկոս Գարեգին Բ-ը մեղադրվում է հերձվածող եպիսկոպոսին չվերականգնելու համար» վերնագրով, «Աշխարհի տարբեր ծայրերից քրիստոնյաները համերաշխություն են հայտնում» ենթավերնագրով ծավալուն հոդվածում Յեգեմանը նախ շարադրում է 301-ին քրիստոնեությունն առաջին պետական կրոն ընդունած հայ ժողովրդի ողբերգության էջերով, նահատակություններով լի պատմությունը եւ նշում, թե «ԽՍՀՄ փլուզումից հետո 1991-ին ՀՀ հռչակումը երկարատև տառապանքների ենթարկված ազգի եւ նրա 17 դարյա եկեղեցու համար դարձավ խաղաղության, ինքնորոշման, ինքնության եւ խորապես արմատացած հավատի վերականգնման ժամանակաշրջան։ Հայաստանն այժմ իր ամենամեծ մարտահրավերներից մեկի առջև է», գրում է Յեգեմանը՝ հիմնավորելով «մինչ օրս հայ ազգի ներքին միասնությունն ու իմաստալից հավատն է եղել, որ ուժ է տվել դիմակայելու ողբերգական ճակատագրին, նույնիսկ 1915-1918-ի ցեղասպանությանը։ Այժմ ականատես ենք Հայաստանի դրամատիկ պատմության» հնարավոր է ամենամեծ ճգնաժամին, որ միաժամանակ ուղիղ հարձակում է նրա միասնության, ինքնության վրա։ Այս անգամ թշնամին ներսից է, արդեն հաջողությամբ պառակտել է հայ ժողովրդին, հիմա սկսում է

«Կաթոլիկներին բարոյական դաժնականությունն է համեմատություն գուցաբերել Հռոմի 4 ֆահանայադեմոստրացիան ընկերոջը՝ Գարեգին Բ-ին»



Լուսանկարը՝ նշված կայքի։ Գարեգին Բ-ն Հռոմի Լեւոն 14-երորդի եւ Միշայել Յեգեմանի հետ։

բաժանել նրանց արմատից, քրիստոնեական ինքնությունից։ Պառակտողին չի մտահոգում այն հանգամանքը, որ Հայաստանի սահմանադրությունը փաստացի կասեցվում է այս գործընթացում», գրում է գերմանացի հեղինակը եւ հավելում՝ «Նա եւս 5 տարով պահիվեց վարչապետի պաշտոնը ընտրությունների միջոցով, որ բազմաթիվ դիտորդներ մանիպուլացված են համարում»։ Յեգեմանը ներկայացնում է կաթոլիկոսի դեմ ելած Նիկոլ Փաշինյանին որպես «ժողովրդական տրիբուն, որ լրագրող, սոցիալական կոնվենցիաների հակառակորդ լինելով, գիտեր երկրի վերնաընտրախավի դեմ տրամադրություն բորբոքելու կերպը, 2018-ին իրականացրեց Թավշյա հեղափոխությունը՝ ֆինանսական աջակցություն ստանալով ԱՄՆ-ից, ԵՄ-ից, Սորոսի հիմնադրամից՝ նպատակ ունենալով ռուսամետ կառավարության տապալումից հետո այն փոխարինել արեւմտամետով։ «Երբ Ադրբեյջանը սկսեց պատերազմը ԼՂ-ի դեմ, Փաշինյանը սկզբում կտրուկ հայտարարություններ արեց, հետո, երբ Վաշինգտոնից մինչեւ Մոսկվա նախկին եւ նոր դաշնակիցներն օտարվեցին, նահանջեց։ 2023-ին Ադրբեյջանը գրավեց ԼՂ անկլավը, վտարեց 150 000 հայերին, ոչնչացրեց նրանց մշակութային ժառանգությունը, 5000 տարվա մասունքներ։ 1915-18-ի ցեղասպանությունը կրկնվում էր, աշխարհը լռում էր, քանի որ ՀՀ վարչապետը նույնպես լռում էր։ Պատմական զուգահեռների վերաբերյալ Փաշինյանը նույնիսկ հերքեց, որ Օսմանյան կայսրությունում 1,5 միլիոնի համակարգված սպանող ցեղասպանություն էր, փաստ, որ 34 երկիր ճանաչել է։ Յեգեմանը նրան մեղադրեցին թուրքական եւ ադրբեյջանական դիրքորոշումներ որդեգրելու, հայ ժողովրդի, նրա ճակատագրի պատմականության շահերին դավաճանելու մեջ»։ Ամենայն հայոց կաթոլիկոսը չլռեց, գրում է Միշայել Յեգեմանը, ներկայացնում Գարեգին Երկրորդի համառոտ կենսագրականը՝ 1975-ին Բոննում աստվածաբանություն է սովորել, 3 տարի դեկավարել Քյոլնի հայ համայնքը, նկատելով սա «մի փորձառություն, որ շարունակում է ձեւավորել հոգեւոր հորը»։ «Երբ 1999-ին 48 տարեկանում ընտր-

վեց Ամենայն հայոց 132-րդ կաթոլիկոս, կենտրոնացավ էկումենիկ երկխոսության վրա, հատկապես՝ Հռոմի հետ։ Հովհաննես Պողոս Երկրորդը 2001-ին, Ֆրանցիսկոսը՝ 2016-ին այցելել են Հայաստան, Բենեդիկտոս 16-երորդի հետ բարեկամական հարաբերությունը պահպանվել է, իսկ Հռոմի պապ Լեւոն 14-երորդին երկու անգամ հյուրընկալվել է։ Երբ Գարեգին Բ-ն դատապարտեց Արցախում մշակութային ցեղասպանությունը, լռելու համար քննադատեց Փաշինյանին, վերջինս հետզհետե բռնապետական վարքն ընդգծելով, քննադատեց կաթոլիկոսին»։ Յեգեմանը նկատել է տալիս՝ «թպետ ՀՀ սահմանադրությամբ եկեղեցին անջատ է պետությունից, սակայն Փաշինյանը բարեփոխումներ է թելադրում եկեղեցուն։ Նա պահանջել է կրճատել պատարագը, սկզբում հնչեցնել պետական օրհներգը, ՀՀ դրոշմ դնել խորանի վրա, ցուցադրել վարչապետի դիմանկարը։ Բայց նախեստա՞ջ վարչապետը պահանջեց հեռացնել կաթոլիկոսին ամենամեծ մեղադրանքներ հնչեցնելով, եւ որպես արհամարհանքի վկայություն նրան ավագանի անունով դիմեց։ Այն հանգամանքը, որ կաթոլիկոսը կանոնավոր կապ էր պահպանում հայկական սփյուռքի՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Գերմանիայի համայնքների հետ, մեկնաբանվեց իբրեւ լրտեսություն կամ դավաճանություն։ Քրիստոնեական կողմնորոշում ունեցող ընդդիմության հետ Գարեգին Բ-ի մերձ կապը առիթ դարձնելով, Փաշինյանը մեղադրեց կաթոլիկոսին իր դեմ հեղաշրջում կազմակերպելու մեջ»։ Յեգեմանի ծավալուն հոդվածի հաջորդ մասն անդրադառնում է եպիսկոպոսների բանտարկությանը։ «Այս ամենը կարելի էր որակել տրագիկոմիկական արտուրդ, եթե վարչապետը չդիմեր ավելի կտրուկ միջոցների»։ Մտահոգ արքեպիսկոպոսներից երկուսի՝ Բագրատ Գալստանյանի եւ Միքայել Աջապահյանի ձերբակալության եւ դատապարտման անդրադառնալով, Յեգեմանը նշում է նաեւ եկեղեցու բարերար Սամվել Կարապետյանի դեմ դատական գործը, հայ միլիարդատիրոջ ընկերություններն այժմ բռնագրավվում եւ ազգայնացվում են։ «Փաշինյանին հաջողվեց մի քանի կարիերամոլ հոգեւորականների համոզել իր կողմն

անցնել։ Նախկին եպիսկոպոս Գեորգ Սարոյանին վարչապետն ընտրել էր որպես Գարեգին Բ-ի իրավահաջորդի։ Երբ Սարոյանը փորձեց պահանջված բարեփոխումները պարտադրել իր թեմի հոգեւորականությանը, կաթոլիկոսն անհապաղ ազատեց նրան։ Սարոյանը դատի տվեց, եւ դատարանը վարչապետի ճնշման ներքո որոշում կայացրեց հօգուտ Սարոյանի, ստիպելով կաթոլիկոսին վերականգնել նրան։ Գարեգին Բ-ը իրաժարվեց արտոնել եկեղեցու ներքին գործերին այս միջամտությունը։ Յեգեմանը դատախազը մեղադրանք առաջադրեց, արգելեց լքել երկիրը։ Ավստրիայի Ս. Փյոլթենում կայացած ժողովին կաթոլիկոսը մասնակցեց տեսակապով, իսկ օգոստոսի 7-ին կաթոլիկոսին եւ 6 այլ եպիսկոպոսի քարշ տվեց դատարան»։ Յեգեմանն այսպես է բացատրում՝ «մեղադրող կողմի պնդումն այն է, որ Սարոյանին եպիսկոպոսի պաշտոնում չվերականգնելու որոշումը դատարանի վճռի անտեսում է։ Հայ առաքելական եկեղեցին սակայն հիմնվում է սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքին, այն է՝ եպիսկոպոսների զեմակումը, ազատումը, կարգապահական պատասխանատվությունը բացառապես իր իրավասության ներքո են, հետեւաբար դուրս են քաղաքացիական կառավարման(կառավարության) իրավասությունից»։ Գերմանացի հեղինակը նշում է, որ այս իրավունքը հաստատուն տեղ ունի քաղաքակիրթ աշխարհում։ «Ոչ մի ամերիկյան կամ եվրոպական դատարան չի քննարկի Հռոմի պապ Ֆրանցիսկոսի հերձվածի պատճառով եպիսկոպոս Վիգա-նոյին էքսկոմունիկացիայի ենթարկելու, եկեղեցուց արտաքսելու հարցը։ (2024-ին Վատիկանը նրան արտաքսեց, քանի որ ԱՄՆ-ում նախկին Գլխավոր Վիգանոն իրապարակայնորեն իրաժարվեց ճանաչել Հռոմի պապի լեգիտիմությունը, Վատիկանի երկրորդ ժողովի հեղինակությունը-ԱՄՆ.) կամ Հռոմի Լեւոն 14-երորդին արգելել սուրբ Պիոս միաբանությանը եկեղեցուց հեռացնելը։ Սրանք եկեղեցու ներքին գործերն են, ոչ թե պետության լուծելիք խնդիր»։

Յեգեմանը ծանուցում է, որ աշխարհի տարբեր անկյուններից արձագանք եղավ եկեղեցու հարցերին միջամտելու վրդովմունքի հետ համերաշխություն հայտնեցին Գարեգին Բ-ին։ Հռոմի պապ Լեւոն 14 -երորդը մտահոգված է ՀՀ-ում ստեղծված իրավիճակի վերաբերյալ։ Հայ առաքելական եկեղեցու պատրիարքները դատապարտեցին կաթոլիկոսի «քաղաքական հետապնդումը»՝ իրենց լիակատար համերաշխությունը հայտնելով։ Ասորի ուղղափառ պատրիարք Իգնատիոս Ռեփիային Երկրորդը նույնպես համերաշխություն

հայտնեց Գարեգին Երկրորդին։ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար Ջերրի Փիլլեյը քննադատեց Փաշինյանի «հարձակումը կրոնական ազատության, պաշտամունքի սրբության եւ կրոնական հաստատությունների ինքնավարության վրա»։ Յեգեմանն իր հոդվածում անդրադառնում է նաեւ Բաղեն Վյուքեմբերգի հայ համայնքի հոգեւոր հովիվ Տիրատուր Սարգսյանի ֆե գրառմանը՝ այն որակելով «կատարյալ անփոփոմ»։ «ՀՀ կառավարությունն ամեն օր ավելի ու ավելի է հեռանում ժողովրդավարությունից։ Այն դատարանը, որ հստակորեն ծառայում է կառավարության նպատակներին, ոչ թե օրենքի գերակայությանը, իշխանության ապահովման գործիք է։ Այն կառավարությունը, որ հրապարակավ նվաստացնում է ժողովրդի կրոնական ներկայացուցչին, նրան դատարանի առջեւ կանգնեցնում, չի հաղթի իրավական պայքարում։ Նա խաթարում է սեփական լեգիտիմությունը։ Այն իշխանությունը, որն ինքնիրեն չի սահմանափակում, ի վերջո կորցնում է այն իշխանությունը, որի անունից գործում է», գրել էր Սարգսյանը։ Յեգեմանը նշում է նաեւ հայկական սփյուռքի կազմակերպությունների մասին, որ աշխարհի տարբեր երկրներից «լիակատար եւ անվերապահ աջակցություն» էին հայտնել Ամենայն հայոց կաթոլիկոսին։ Դատավարությանն անդրադառնալով գերմանացի հեղինակն այն «ամոթի օր» է որակում։ «Գարեգին Բ-ն մեղադրվող 6 եպիսկոպոսները ներկայացան նիստին, որ րոպեներ տեւեց։ Գործը քննող դատավոր Հակոբ Մանուկյանն ինքնաբացարկ հայտնեց։ Դատավարությունը հետաձգվել է, դեռեւս անորոշ է ամսաթիվը»։ Յեգեմանը նկարագրում է, որ դատարանի բակում կաթոլիկոսին երգով, ջերմորեն են դիմավորել հազարավոր բարեպաշտ հայեր, ընդդիմադիր քաղաքական գործիչներ։ «Առավել ամոթալի է արեւմտյան քաղաքական գործիչների լռությունը։ Տճտեսական եւ քաղաքական շահերը կարծես աչք ու ականջ փակում են։ Ով հավաքական արեւմտեքի ռազմավարական գործընկեր է համարվում, ըստ երեւույթին արտոնություն է ստանում անել այն, ինչը հակառակորդի պարագայում կդատապարտվեր։ Սակայն միայն քաղաքական նպատակահարմարության վրա հիմնված իրավունքն այնքա ոչ թե իրավունք է, այլ իշխանության գործիք։ Յուրաքանչյուր բարեխիղճ քրիստոնյա պիտի ծանաչի անարդարությունը, որտեղ էլ դա լինի։ Այդ պատճառով նաեւ կաթոլիկներին բարոյական պարտականությունն է համերաշխություն ցուցաբերել Հռոմի 4 քահանայապետների ընկերոջը՝ Գարեգին Բ-ին», հոդվածն այսպես է եզրափակում Միշայել Յեգեմանը։

⇒1 Առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ հենց Սաուդյան Արաբիայի ուղղությունը: Եթե Հայաստանը կարողանա զարգացնել քաղաքական, տնտեսական եւ դիվանագիտական կապերը Ռիադի հետ, ապա կկարողանա նվազեցնել այն հավանականությունը, որ Սաուդյան Արաբիայի հարաբերությունները թուրքիայի եւ Ադրբեջանի հետ աստիճանաբար վերածվեն Հայաստանի նկատմամբ միասնական քաղաքական դիրքորոշման:

Նույն տրամաբանությունը պետք է կիրառել նաեւ մյուս արաբական եւ մահմեդական պետությունների նկատմամբ: Հայաստանի դիվանագիտությունը չպետք է այդ երկրներին ընկալի որպես միասնական «Թուրքիայի եւ Ադրբեջանի ճամբար»: Ընդհակառակը՝ անհրաժեշտ է աշխատել յուրաքանչյուր երկրի հետ առանձին՝ բացահայտելով նրա սե-

«Մեֆայի լուսաբանական դաշինք» ռազմաֆադաբական եւ դիվանագիտական հետեւանքները Հայաստանի համար



փական շահերը եւ Հայաստանի հետ համագործակցության հնարավորությունները:

Արցախյան հակամարտության տարիներին Ադրբեջանը կարողացավ ԻՂԿ հարթակն օգտագործել իր դիրքորոշումը մահմեդական աշխարհի շրջանակներում առաջ մղելու համար: Եթե Թուրքիայի, Պակիստանի եւ այլ պետությունների միջեւ համագործակցությունը խորանա, Բաքուն կարող է փորձել այդ քաղաքական կապիտալը նույնպես վերածել նոր դիվանագիտական գործիքի:

Հայաստանի համար վտանգն այստեղ ոչ միայն ծայների կամ հայտարարությունների հնարավոր փոփոխությունն է: Ավելի կարեւոր է

այն, որ Ադրբեջանը կարող է փորձել հայ-ադրբեջանական հակամարտությունը ներկայացնել ոչ միայն որպես տարածքային եւ քաղաքական խնդիր, այլեւ որպես իսլամական աշխարհի համերաշխու-

թյան հարց: Այդ դեպքում Երեւանի համար միջազգային օրակարգում հակազդելը կարող է ավելի բարդանալ:

Ուստի Հայաստանի պատասխանը պետք է լինի ակտիվ եւ նախաձեռնողական

դիվանագիտությունը մահմեդական աշխարհի հետ: Երեւանը պետք է ոչ թե հեռանա այդ միջավայրից, այլ ընդլայնի իր ներկայությունը այնտեղ:

Այս առումով Հայաստանի եւ Իրանի շահերը որոշակիորեն հատվում են: Թեհրանը եւս շահագրգռված չէ տարածաշրջանում Թուրքիայի եւ Ադրբեջանի ազդեցության անվերահսկելի ընդլայնմամբ եւ կարող է դիտարկել Հայաստանի ակտիվ կապերը արաբական եւ այլ մահմեդական պետությունների հետ որպես տարածաշրջանային հավասարակշռության պահպանման լրացուցիչ գործոն:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արտագիտական գիտությունների դոկտոր

⇒1 Google -ը հուլիսի վերջին Ֆրանսիայում թողարկեց իր նոր AI Overview գործառնությունը: Այն հայտնվում է Google-ի որոնումներում սովորական հղումներից վերեւ՝ ամփոփելով տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները: Թեեւ այդ աղբյուրները, որ հաճախ լրատվական կայքեր են, ցուցադրվում են, սակայն թերթերի հրատարակիչներն ու խմբագիրները կասկածում են՝ որեւէ մեկը կսեղմի՞ հղման վրա, կկարդա՞ հոդվածները:

Թերթերի Apig ընկերակցությունը հայտնում է, որ Google-ը խախտում է 2022 թվականին կնքված համաձայնագիրը: Այդ ժամանակ երկար բանակցություններից հետո Ֆրանսիական մամուլը եւ ամերիկյան կորպորացիան համաձայնության եկան բովանդակության օգտագործման, փո-

Ֆրանսիական թերթերը լուսաբանում են, որ Google-ը վճարի իրենց

խախտուցման հարցում: Համաձայնագիրն անցյալ տարի վերակնքվեց այն բանից հետո, երբ Ֆրանսիայի մրցակցային մարմինը Google-ին խախտումների համար տուգանեց 250 միլիոն եվրո:

Google-ը Գերմանիայում էլ նմանատիպ գործառնությւ ունի: Կան հստակ տվյալներ, որ ցույց են տալիս, թե ԱՄԿ կազմած ամփոփագրերի ներդրումից ի վեր գերմաներեն լեզվով լրատվական կայքերի այցելումների թիվը զգալի նվազել է: «Դոյչլանդֆունկի» այս տեղեկությունն առիթ տվեց մտածել՝ իսկ Հայաստանում շատե՞րն են օգտ-

վում ԱՄԿ -ի կազմած ամփոփագրերից, թե՞ վստահում են իրենց սիրելի առցանց կայքերին, լրատվությունը քաղում են նախընտրելի թերթերից: Սա կփորձենք պարզել առաջիկայում:

Իսկ մինչ պարզելը, հարց ուղղեցինք ԱՄԿ-ին՝ ԱՄԿ-ն օգնու՞մ, թե՞ խանգարում է հայաստանյան լրատվամիջոցներին: Այսպես է պատասխանում՝ «ԱՄԿ-ն Հայաստանի տպագիր եւ առցանց թերթերին ուղղակիորեն չի խանգարում, այլ ստեղծում է նոր մարտահրավերներ եւ հնարավորություններ: Լրատվամիջոցները փորձում են այն օգտագործել աշխատանքը հեշտացնելու համար,

սակայն բախվում են տեխնիկական եւ որակական խնդիրների: Արհեստական բանականության գործիքները հաճախ սխալ են հասկանում եւ գրում հայերեն, ավտոմատ թարգմանված կամ գրված նյութերը կարող են սխալ փաստեր պարունակել: Տեղական շատ խմբագրություններ միջոցներ չունեն ԱՄԿ նոր համակարգեր գնելու համար: Օգտակարն այն է, որ օգնում է արագ հավաքել տեղեկությունները, ուղղել տեքստերը, հեշտացնում է լուրերի թարգմանությունը»:

ՄԱՍԿԵՏ ՀՈՎԻՏՓՅԱՆ
Գերմանիա

⇒1 Հիշեցնենք, որ վերջին ամիսներին Իսրայելի ղեկավարներն ավելի հաճախ են խոսում Թուրքիայի հետ առնականության եւ հնարավոր բախման մասին:

Վերլուծաբանների գնահատմամբ, այս դաշինքը երեք երկրների փորձն է՝ Իրանի դեմ պատերազմի հետեւանքով ստեղծված ճգնաժամից հետո վերահամաստավորելու եւ վերածելավորելու իրենց դիրքերը տարածաշրջանում:

Դաշինքի տեքստի հրապարակումից հետո առաջին արձագանքներից մեկը ՆԱՏՕ-ի պայմանագրի 5-րդ հոդվածի հետ դրա համեմատելն էր: Այդ դրույթը սահմանում է, որ անդամներից մեկի վրա զինված հարձակումը համարվում է հարձակում ամբողջ դաշինքի վրա:

Թուրքիայի արտգործնախարար **Հաքան Ֆիդանը** հայտարարել է, որ Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի եւ Պակիստանի միջեւ Մեքքայի համատեղ պաշտպանական դաշինքը տեխնիկական առումով նման է ՆԱՏՕ-ի 5-րդ հոդվածին՝ կոլեկտիվ պաշտպանության սկզբունքի տեսանկյունից: Նրա խոսքով, համաձայնագրի նպատակն է նպաստել տարածաշրջանում երկարաժամկետ կայունության հաստատմանը:

Խոսելով ՆԱՏՕ-ի 5-րդ հոդվածի տրամաբանության մա-

սին՝ Ֆիդանն ասել է, որ դաշինքի հիմնական զսպող ուժը պաշտպանական բնույթ ունի: Դրա ուղերձը, ըստ նրա, հետեւյալն է. «Եթե հարձակվեք ինձ վրա, իմ տրամադրության տակ ունեմ մեծ պաշտպանական դաշինքի ուժ»:

Թեհրանի արձագանքը

«Մեքքայի պաշտպանական դաշինքի» ստորագրումն Իրանում տարբեր արձագանքների արժանացավ:

Իրանական որոշ դիտորդներ համաձայնագրից հետո կոչ արեցին ընդլայնել համագործակցությունը մահմեդական երկրների միջեւ եւ նույնիսկ առաջարկել տարածաշրջանային դաշինք ստեղծել Իսրայելի դեմ:

Սակայն Իրանում շատերն էլ կարծում են, որ այս նոր դաշինքը, ի վերջո, կարող է ուղղված լինել նաեւ Իրանի դեմ:

Այս մտահոգությունն ավելի է հիմնավոր դառնում այն պատճառով, որ համաձայնագիրը ձեւավորվել է Իրանի եւ ԱՄՆ-ի վերջին պատերազմի ֆոնին: Այդ պատերազմի ընթացքում Իրանը հարձակվել էր Սաուդյան Արաբիայի եւ Պարսից ծոցի այլ երկրների

ուղղությամբ՝ այդ գործողությունները ներկայացնելով որպես պատասխան ԱՄՆ-ի կողմից տարածաշրջանի ռազմականացման իրականացված հարձակումներին:

Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ ծավալված հակամարտությունը որոշ ժամանակ անց տարածվեց նաեւ լիբանանյան ուղղությամբ, իսկ այժմ, ըստ զարգացումների, այն հասել է նաեւ Եմեն եւ Բաք էլ-Մանդեբի նեղուց:

Մեքքայի դաշինքի վերաբերյալ Իրանի առաջին պաշտոնական արձագանքը հնչեց Իրանի խորհրդարանի ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության մշտական հանձնաժողովի անդամ **Էբրահիմ Ռեզայի-ի** կողմից: Նա «X» սոցիալական ցանցում գրել է, որ «արտաքին համաձայնագրերին ապավինելը Ռիադի համար անվտանգության փրկության ճանապարհ չի ստեղծի»:

Ռեզային հավելել է. «Սաուդյանները պետք է հասկանան, որ Թուրքիայի եւ Պակիստանի հետ թղթի վրա կնքված համաձայնագիրը նրանց անվտանգություն չի ապահովի, ինչպես որ տարիներ շարունակ

ամերիկացիներին ապավինելը նույնպես չերաշխավորեց նրանց անվտանգությունը»:

Նա նաեւ զգուշացրել է. «Փոխեք ձեր քաղաքականությունը, որպեսզի ստիպված չլինեք ուրիշներից անվտանգություն աղերսել»:

Սակայն Իրանի արտգործնախարար **Աբբաս Արադջին**, առանց ուղղակիորեն անդրադառնալու Մեքքայի դաշինքին, հարեւան երկրներին հասցեագրված ուղերձում կոչ է արել վարել «ինքնաբավության» քաղաքականություն եւ տարածաշրջանում որդեգրել «իրական եղբայրության» վրա հիմնված մոտեցում:

Միաժամանակ նա ընդգծել է, որ այս համաձայնագիրը չի կարող զսպել Իրանին, եւ որ Իրանի զինված ուժերն ունակ են դիմակայելու «աշխարհի ամենագարգացած ռազմական տերություններին»:

Դիմելով մահմեդական երկրներին՝ Արադջին նաեւ ասել է. «Ժամանակն է, որ մենք ապավինենք միայն ինքներս մեզ եւ որդեգրենք իրական եղբայրության մոտեցումը»:

Ավելի ուշ ԻԻՀ ԱԳՆ խոսնակ **Էսմայիլ Բադային** ներկայացրեց Իրանի արտաքին գե-

րատեսչության պաշտոնական դիրքորոշումը Մեքքայում ստորագրված փաստաթղթի մասին, հետեւյալ ձեւակերպմամբ՝ «Ոչ մի պատճառ չկա անհանգստանալու, որ այս դաշինքն ուղղված է Իրանի դեմ»:

Դաշինքի հակաիրանական ուղղվածության մասին մտահոգությունները փարատելու համար իր տեսակետն է հայտնել նաեւ Իրանի նախկին արտգործնախարար **Սոհամմադ Ջավադ Ջարիֆը** եւ անդրադարձել իսլամական երկրների միջեւ համապարփակ պաշտպանական պայմանագրերի անհրաժեշտությունը:

Քաթարում, Լիբանանում եւ Հորդանանում Իրանի նախկին դեսպան **Սոհամմադալի Սոփանին**, «ԻՌՆԱ»-ին տված հարցազրույցում Թուրքիայի, Պակիստանի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ կնքված դաշինքը գնահատել է ոչ թե որպես Թեհրանի դեմ ուղղված զսպման միջոց, այլ իբրեւ ներքին անվտանգության կառուցակարգ՝ ձեւավորելու հնարավորություն եւ Իրանի ու ԱՄՆ-ի միջեւ ընթացող հակամարտությանը վերջ դնելու հիմք:

ԱՐԵՎԻ
ԲԱՆԳԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – ԺՈՒՆԻՅԱՆ (ԺՈՐԺ ՕԽԱՆՆԵՅԱՆ) ֆրանսահայ երգիչ, երգահան եւ նկարիչ է: Ծնվել է 1946-ին Մարսելում: Ծննդավայրի եւ Փարիզի գեղարվեստի բարձրագույն դպրոցներում ուսանելուց հետո 1971-ին հիմնել է «Ալբերը եւ նրա պոլիորկետիկ փողային նվագախումբը»: Գրել է առաջին ֆրանսիական ռոք-օպերաներից մեկը՝ «Ռոքերների անեծքը»: Հանդես է եկել բազմաթիվ փառատոներում, համերգասրահներում, ռադիոյի եւ հեռուստատեսության հաղորդումներում: 1974-ից որպես նկարազարդող եւ սցենարիստ աշխատակցել է «Ալտ-յուել» եւ «Ջազ հոթ» ամսագրերին, մասնակցել Հնդկաստանում ու Բալիում նկարահանված «Ճանապարհը» ֆիլմին: 1978-ից լիովին նվիրվել է ռեգգի երաժշտությանը՝ ստեղծելով մի շարք հայտնի երգեր: 1982-ին միացել է անտիլյան «Մեն ին դը հիլ» խմբին, որի հետ ձայնագրել է մի շարք ռեգգի ստեղծագործություններ: Այնուհետեւ ստեղծել է «Ջիբրիլ սաունդ սիստեմ» եւ «Դաբ օլիմպիկ» խմբերը: 1989-ին գրել է իր առաջին հայերեն երգը՝ «Արեւին ձայնը», որը կատարվել է Հայաստանում երկրաշարժից տուժածներին նվիրված բարեգործական համերգի ժամանակ: Կորբոն նաեւ բանաստեղծ է, գրում է նաեւ հայկական թեմաներով:

Մեր գրույցը տեղի ունեցավ Երեւանի զբոսայգիներից մեկում, ֆրանսերեն, սակայն գրույցի ընթացքում ժոն երբեմն խոսքի մեջ ներառում էր նաեւ հայերեն բառեր եւ արտահայտություններ:

- Այսօր հուլիսի 17-ն է, գրուցելու եմ ժո Կորբոնի հետ: Բայց ինչո՞ւ Կորբոն («Ազոավ»):

- Դա մի տեսիլք էր, որ ունեցա մտասուզման ժամանակ: Ազոավն առաջին կենդանին էր, որ Նոյը բաց թողեց տապանից՝ աղավաղեց առաջ: Նա բացեց տապանը, ազոավը թռավ եւ այլեւս չվերադարձավ: Բայց հիմա ես վերադառնում եմ: Երկրորդ անգամ: Առաջին անգամ Հայաստան եկա 2004-ին՝ Մարսելի տարածաշրջանային խորհրդի հրավերով, որպես հայ, պատվիրակության կազմում: Ներկայացնում էի արվեստագետներին: Այդ պատվիրակությունը բազմաթիվ օգտակար նախաձեռնություններ իրականացրեց Հայաստանում. հրշեջ ծառայությանը մեծ քանակությամբ սարքավորումներ նվիրեց, աջակցեց զբոսաշրջության զարգացմանը եւ այլ ծրագրերի: Այս անգամ ամեն ինչ այլ է. գավակներս՝ փեսաս եւ նրա կինը, ինձ նվիրեցին այս ճանապարհորդությունը, որովհետեւ դեկտեմբերին կդառնան 80 տարեկան: Սա իմ տարեդարձի նվերն է:

-Նախապես շնորհավորում եմ: Ժո՛ւ, ինչպե՞ս կընորոշեք

ձեր մասնագիտական գործունեությունն ու ձեր տեղը ֆրանսիական երաժշտության պատմության մեջ:

-Ես այն սերնդից եմ, որ սկսեց ռոք-ն-ռոլից: Հետո հետաքրքրվեցի բլյուզով, ջազով եւ ժամանակակից այլ երաժշտական ուղղություններով, մինչեւ որ 1977-ին Բոբ Մարլիի շնորհիվ բացահայտեցի ռեգգին: Ներկա եղա նրա համերգներից մեկին, եւ հենց այդ պահից որոշեցի ինքս էլ զբաղվել այդ երաժշտությամբ: Ֆրանսիայում առաջիններից էի, որ սկսեցի ռեգգի երգել ֆրանսերեն: 1977-1980 թթ. ստեղծեցի իմ առաջին խմբերը եւ մասնակցեցի Ֆրանսիայում ռեգգիի շարժման ձեւավորմանը: Բայց դրանով ամեն ինչ չի սահմանափակվում: Ես նաեւ սովորել եմ Գեղարվեստի բարձրագույն դպրոցում, աշխատել եմ որպես նկարիչ, ձեւավորող, մամուլի նկարազարդող, պաստառների եւ պատկերապատումների հեղինակ: Բացի այդ, զբաղվել եմ փողոցային ներկայացումներով եւ փերֆորմանսներով: Ասեմ, որ ես երգահան-կոմպոզիտոր եմ. չեմ կատարում ուրիշների երգերը, այլ երգում եմ միայն իմ խոսքերով ու երաժշտությամբ գրված երգերը, իսկ գործիքավորումները մշակում ենք երաժիշտների հետ միասին:

-Ձեր անվան հետ է կապվում առաջին ֆրանսիական ռոք-օպերայի ստեղծումը...

-Եիշտ այդպես: Ուզում եմ նաեւ իմանաք, թե ինչն էր ոգեշնչել այդ ռոք-օպերան: Այն մեծ հաջողություն ունեցավ ֆրանսիական երաժշտության պատմության մեջ:

- Այո՛, լեգենդար «Հիսուս Քրիստոս գերաստղից» հետո, այնպես չէ՞:

-Մենք «Ռոքերների անեծքը» ստեղծեցինք 1973-ին եւ առաջինը Ֆրանսիայում պաշտոնապես բեմադրեցինք իսկական ռոք-օպերա: Ոգեշնչվել էինք իմ պատանեկության սիրելի ռոք-ն-ռոլ երգիչներից ամերիկացի Ջին Վինսենթից ու որոշեցինք նրան եւ առաջին ռոքերների ողջ սերնդին հարգանքի տուրք մատուցել: Ներկայացումը բավական այուրեղեալիստական էր. բեմում անընդհատ հայտնվում ու անհետանում էին կերպարներ, տարբեր տարրեր էին միախառնվում: Համաճումն ալբոմն էլ լույս տեսավ 1973-ին եւ մեծ հաջողություն բերեց մեզ: Համերգներով հանդես եկանք հեղինակավոր բեմերում, այդ թվում Փարիզի «Բոբինո» թատրոնում: Շատ գեղեցիկ ժամանակաշրջան էր:

-Այժմ խոսենք ձեր հայերեն երգի մասին: Կարծում եմ՝ առաջին անգամ էր, երբ Ֆրանսիայում ծնված մի հայ երգ գրեց հայոց լեզվով, այդպե՞ս է՞:

-Կարծում եմ՝ այո՛, զոնե ժամանակագրորեն: Առավել եւս՝ որ այն բոլորովին նման չէր հայ ավանդական երաժշտու-



թյանը, քանի որ ռեգգի էր, որը լիովին այլ ռիթմ ունի: Ինձ ոգեշնչել են ճամայկացի մեծ երաժիշտները՝ Բոբ Մարլին, Փիթեր Թոշը, Ջիմի Բլիֆը եւ այլք: Եվրոպա այդ մշակույթը հասավ ավելի ուշ եւ սկզբում տարածվեց հիմնականում աֆրո-կարիբյան համայնքներում: Ես այդ երաժշտությունը միավորեցի իմ սեփական մշակույթին: Երգը կոչվում է «Արեւին ձայնը»: Մի օր ինքս ինձ ասացի, որ անպայման պետք է հայերեն երգ գրեմ: Բայց դրա համար պետք է ոգեշնչվեի Հայաստանից եկող ինչ-որ բանով: Ամբողջ գիշեր լսում էի տանը եղած հայկական ծայրագնականները՝ շարականներ, պատարագ, աշուղական երաժշտություն, զուռնայի նվագ... Լսեցի մինչեւ լուսաբաց: Երբ արելը ծագեց ու լուսավորեց սենյակս, երգը հանկարծ ինքնին ծնվեց: Չարմամալի էր, որովհետեւ իրականում ես շատ վատ եմ խոսում հայերեն: Բայց տեղի ունեցավ մի բան, որ կարող եմ միայն միստիկական անվանել: Երբ տեսա արելը, անմիջապես մտածեցի Ջահի մասին: Ռաստաֆարի շարժման մեջ, որը ես ավելի շուտ փիլիսոփայություն եմ համարում, քան կրոն, Ջահ մշանակում է Աստված:

Ռաստաֆարի շարժումը ծնվել է ճամայկայում՝ եթովպիայի կայսր Հայլե Սելասիե Առաջինի ազդեցությամբ: Գիտեք, որ եթովպիան աշխարհի ամենահին քրիստոնյա պետություններից մեկն է՝ Հայաստանից հետո: Հայլե Սելասիեի թագադրության ժամանակ նրան շնորհվեցին «Արքայից արքա», «Տերերի Տեր» եւ «Հուդայի ցեղի հաղթական Առյուծ» տիտղոսները: Ռաստաֆարիներն այդ ամենը կապեցին «Հայտնության» գրքի հետ, որտեղ Քրիստոսը նույնպես ներկայացվում է որպես Արքայից արքա եւ Տերերի Տեր: Այդպես ձեւավորվեց նրանց հավատը, եւ Աստծուն նրանք կոչեցին Ջահ: Իսկ հետո բառերը սկսեցին ինքնաբերաբար հոսել: Գրեթե չէի

մտածում, պարզապես գրում էի. «Սովորեցի անգլերեն՝ հասկացա լեռների լեզուն, սովորեցի լատիներեն՝ տեսա ամբողջ աշխարհը, պատերազմ կար Լեհաստանում՝ եկա Արմազդեդոնից, վտանգավոր օր էր...»: Այդ ամենը կարծես գալիս էր ինձնից վեր կանգնած ինչ-որ ներշնչանքից:

-Հետաքրքրական է... Այժմ մի փոքր պատմե՛ք ձեր ընտանիքի մասին:

-Հորս անունը Տիգրան է, մորս՝ Հայկուհի: Հորս Հովհաննիսյանների ընտանիքը Օրդուից էր՝ Սեւ ծովի ափից, Պոնտոսից: Մայրս, ծնյալ Չաքըրյան, բոլորովին այլ վայրից էր՝ Կյուրինից, Սեբաստիայի շրջանից: Ցեղասպանության ժամանակ իմ բոլոր պապերն ու տատերը սպանվել են: Հորս գերդաստանից միայն ինքն է կարողացել փրկվել: Ամբողջ ընտանիքը ձերբակալվել է, իսկ նա՝ 14-15 տարեկան պատանի, միայնակ կարողացել է փախչել: Հասել է Կոստանդնուպոլիս, ապա ֆրանսիական հյուպատոսության տրամադրած փաստաթղթերով մեկնել է Մարսել, հազարավոր այլ հայերի պես:

Մորս ընտանիքը խոշոր մետաքսագործարանի տեր է եղել, պատրաստել են մետաքսե մեծ գլխաշորեր: Թուրքերը նրանց ամբողջովին կողոպտել են: Պապիս սպանությունից հետո տատս մորս եւ նրա փոքր եղբոր՝ Հակոբի հետ տարագրվել է սիրիական անապատ, որտեղ էլ մահացել է: Մայրս սեփական ձեռքերով է նրան թաղել անապատում: Մայրս եւ եղբայրը հասել են Հալեպ, ապա տեղափոխվել են Դամասկոսի որբանոց, իսկ հետո՝ Երուսաղեմ: Այնտեղից էլ մայրս վերջապես կարողացել է մեկնել Ֆրանսիա եւ հասնել Մարսել:

Ծնողներս Հայաստանի երկու բոլորովին տարբեր պատմական շրջաններից էին: Եթե ցեղասպանությունը չլիներ, նրանք երբեք չէին հանդիպի, ու ես էլ չէի ծնվի: Մի քանի տարի անց նրանք ծանոթացել են Մարսելում եւ ամուսնացել:

Նախ ծնվել է ՕՆՆԻկ եղբայրս եւ Փարիզեք քույրս: Ես աշխարհ եկա շատ ավելի ուշ. եղբայրս արդեն 18, իսկ քույրս՝ 15 տարեկան էին: Կարելի է ասել՝ մի փոքր «անակնկալ» երեխա էի, բայց, ինչպես ասում են, այդպես էր Աստծո կամքը: Ծնվել ու մեծացել եմ Մարսելում՝ բավական փակ հայ միջավայրում, որտեղ ընտանիքները հիմնականում շփվում էին նույն գավառից եկած կամ վաղուց միմյանց ճանաչող մարդկանց հետ:

-Եվ որտեղ պահպանվում էին հայկական ավանդույթները...

-Այո՛, հատկապես Ջատիկին: Կարմիր ձվեր էինք ներկում, ինչը շատ էի սիրում: Նաեւ եկեղեցի էինք գնում: Բայց ես շատ փոքր էի, ընդամենը հինգ տարեկան, երբ կորցրի մորս: Հավանաբար հենց այդ պատճառով էլ աստիճանաբար մոռացա հայերենը: Մինչեւ հինգ տարեկանը նույնիսկ ֆրանսերեն չէի խոսում, միայն հայերեն: Երբ Մարսելի այգիներում խաղում էի մյուս երեխաների հետ, վերադառնում էի տուն ու մորս ասում. «Ես նրանց հետ խոսում եմ, բայց ինձ չեն պատասխանում»: Չէի հասկանում, որ նրանց հետ հայերեն էի խոսում, իսկ նրանք ֆրանսիացիներ էին:

Մորս մահից հետո ինձ խնամեց քույրս: Նա ինքն էլ դեռ շատ երիտասարդ էր: Խնամեց հորս, եղբորս, հետո ամուսնացավ: Իսկ ես կամաց-կամաց մերվեցի ֆրանսիական հասարակությանը: Հայրս առանձնապես կապված չէր հայկական կուսակցությունների եւ կազմակերպությունների հետ: Եկեղեցի գնում էինք միայն Սուրբ Ծնունդին եւ Ջատիկին: Իհարկե, շարունակում էի տեսնել մեր ազգականներին: Բայց, եթե անկեղծ լինեմ, մանկության տարիներից չէի սիրում այդ ընտանեկան հավաքները, որովհետեւ դրանք միշտ տխուր էին: Անընդհատ խոսում էին ցեղասպանության եւ իրենց կորուստների մասին: Երեխայի համար դա ուրախ մթնոլորտ չէր: Երեւի հենց դրա համար էլ շատ արագ մերվեցի ֆրանսիական հասարակությանը:

- Մենք հաճախ ասում ենք, որ հայերը մի մեծ ընտանիք են: Գիտեմ, որ դուք ազգակցական կապ ունեիք գրող Ջարեհ Որբունու հետ:

-Նա իմ հորաքրոջ որդին էր: Ես շատ լավ ճանաչում էի Ջարեհին: Ազգանունը Օքսուզյան էր: Նա Մարսելում ապրում էր իր եղբայր Լորանի (Նուրիան) եւ քույր Մելանուշի հետ: Հաճախ էինք հանդիպում, հատկապես Ծննդյան օրերին: Բայց Ջարեհը շատ երիտասարդ հասակում տեղափոխվեց Փարիզ: Ընտանիքում նրան մի փոքր տարօրինակ մարդ էին համարում: Նրա եղբայրը, ընդհակառակը, զործարար էր, կահույքի արտադրության ձեռնարկում

- Երբ գրում եք, ո՞ր երկրում եք լինում՝ իրական հայրենիքում, թե՞ հիշողության հայրենիքում:

- Իհարկե, հիշողության, քանի որ հուշերիս հետքերն են դրոշմում տողերիս, կյանքից ստացած տպավորությունները: Հայրենիքից դուրս կարոտն ավելի է թանձրացնում ասելիքներս, կարեւորել տալիս ամեն մանրուք: Իմ բանաստեղծական աշխարհում ես եմ՝ որպես խենթ պոետ, եւ ասում եմ՝ թող մուսաները զան ու մնան ու փարվեն ինձ: Շատ կարեւոր է ներշնչանքը...

- Շարունակեմ ձեր ասելիքը, նույն բանաստեղծության մեջ, որ կոչվում է «Ես կմնամ մենակ», ասում եք, որ հողմերի տված ցրտից «ես կդողամ ու դրանից պտուղներս կքաղցրանամ»: Գեղեցիկ է ասված: Էլ ո՞ր տողը կհիշեիք ձեր բանաստեղծություններից:

-Հիմա հանկարծ հիշեցի «Թիթեռը»: Նա՝ թիթեռը, սավառնում է օդում՝ գույնզգույն հանդերձանքով եւ տենչալով սիրածին՝ իր պարն է պարում: Բայց նա մեկ օր ունի, ընդամենը: Եվ պոետն ուզում է մեկ օրով էլ երկարացնել նրա կյանքը՝ ասելով՝ «իմ կյանքից գոնե մի օր ես թիթեռին տայի»...

-Շատ տպավորիչ էր, իրոք: Հետաքրքրական, թատրոնին նմանվող տեսարաններ ունեն «Վարագույրի մենախոսությունը», «Առակ», «Օտարություն», «Փողոցի անկյունի սրճարանում», «Ձեռքդ տուր», «Մի պտույտ է, ուրիշ ոչինչ» բանաստեղծությունները: Իսկ ի՞նչն է հատկապես ոգեւորում բանաստեղծին:

-Իհարկե՝ սերը: Առանց սիրո մոլոր-

«Կյանքն ինձ համար երկու երես ունի. հեռավորություն եւ վերադարձ...»

Զրույց ամերիկահայ բանաստեղծ, ԱՄՆ Հայ գրողների միության անդամ Արմեն Փաշայանի հետ



րակը չի կարող պատվել: Սերն է ստիպում նկատել ամեն ինչ, ստեղծագործել, սպասել հաջորդ օրվան: Սերը՝ անձնական, Հայրենիքի, ընտանիքի հանդեպ, բնությունը եւս կենտրոնացնում եւ հիացնում է իր բազմազանությամբ: Ինձ համար ամեն ինչ է հետաքրքրական եւ կարեւոր՝ տերեւը, կանաչը, ամպը, կենդանին, քամին,

ծառն ու բարը: Եվ մարդկային հարաբերությունները, մեծությունը, թախծը, կարոտը: Այս բոլորը խմորվում են իմ մեջ եւ արձագանքվում տողերում:

- Ձեր բանաստեղծությունը՝ «Շառլ Ազնավուրին», երգ դարձավ: Անդրադառնա՞նք բովանդակությանը: Հայազգի մեծ երգիչը երգել է Ֆրանսերեն, բայց հոգին հայի էր, ինչպես Սարոյանի դեպքում: Այստեղ ասում եք՝ ամեն տեղ Հայաստան է, երբ Շառլն է երգում: Ինչպե՞ս ծվեցին արդեն հայտնի երգի տողերը:

-Միշտ սիրել եմ Շառլին, լսել նրա երգը, եւ ամեն լսելիս զարմացել եմ նրա ասելիքի խորությունից, հոգու հսկա տարածքից, որն ինձ ազնվացրել է, մոռացնել տվել տխրությունս, արթնացրել հուշերս, հեռացրել անախորժը: Այդ զգացումներից է ծնվել բանաստեղծությունը: Եվ ինձ թվացել է՝ նա որտեղ էլ երգի, աշխարհի որ մասում էլ, այդտեղ կթեւածի հայկականը, կբացվի լույսը, կճախրի սերը: Եվ պատահական չէ, որ հենց դա երգ դարձավ:

-Հինգ բանաստեղծական ժողովածու ունե՞ք՝ զրված տարբեր տարիներից: Վերջինը՝ «Փողոցի անկյունի սրճարանում», թարգմանական է, տեղ են գտել անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, ֆրանսերեն եւ

չինարեն թարգմանություններ: Ի՞նչ է տալիս թարգմանությունը բանաստեղծին:

-Առաջին հերթին՝ հաճույք, երբ լսում ես քո տողը այլ լեզվով, այն նոր մեղեդային հագուստ է ստանում, նաեւ հասկանալի դառնում օտարին: Ես ապրում եմ ԱՄՆ-ում, այնտեղ շատերն են ծանոթացել իմ գործերին, հավանության արժանացրել մտքերս, ասելիքներս: Մի՞թե քիչ է դա, երբ դու ընկալելի ես դառնում այլազգի գրչընկերոջ, հետո տեղի են ունենում քննարկումներ, գրույցներ, որն օգտակար է կարծիքներ լսելու առումով:

-Այսօր, երբ աշխարհում տարբեր վայրերում են ապրում հայերը, ի՞նչ է նշանակում ձեզ համար լինել հայ բանաստեղծ:

-Լավ հարց է: Դա իմ ինքնությունն է: Իմ արմատները Մուսալեռից են: Ես գրել եմ տողեր այդ մասին. «Իմ տոհմի կանչը հեռվից է գալիս, Անտիոքի հեռու ճամփեքի պես, Ու զանգակատան զանգից է գալիս, Հավատով լեցուն ժողովրդի պես»: Ինձ համար առաջինը մաշտոցյան հայերենն է, այսինքն՝ լեզուն եւ մեր Հայաստանը, որը մեր օրրանն է, մեր հոգին, որը պիտի խնամենք, պաշտենք ու պաշտպանենք:

Զրույցը վարեց գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆԸ

⇒4 Ես հաճախ էի հանդիպում Ջարեհին, բայց այն ժամանակ նույնիսկ չգիտեի, որ նա գրող է: Այդ մասին իմացա միայն ավելի ուշ, երբ շուրջ քսան տարեկանում մեկնեցի Փարիզ՝ ուսումնա շարունակելու: Նա եւ կինը՝ Էլզասի Լիլին, մեծ սիրով ինձ հյուրընկալեցին իրենց տանը: Երկուսն էլ բացառիկ մարդիկ էին: Ջարեհը Ֆրանսիայում բացել էր առաջին մակրոբիոտիկ ռեստորանը: Նա ճապոնացի մտածող Ժորժ Օսավայի հետեւորդն էր, որի սննդակարգի փոփոխությունը հիմնված էր հիմնականում հացահատիկի եւ բուսականության վրա: Նրա ռեստորանը գտնվում էր Սեն Ժերմեն-դե-Պրե թաղամասում: Նրանք ինձ ընդունեցին, եւ հենց այդ ժամանակ էլ ես նրանց իսկապես ճանաչեցի: Երկուսն էլ խոր հոգեւոր որոնումների մեջ էին, իսկ կյանքի վերջում հարում էին բահայական հավատքին: Ես Ջարեհին հանդիպել եմ մինչեւ նրա կյանքի վերջին օրերը: Բացառիկ բարի մարդ էր: Բայց քանի որ գրում էր միայն հայերեն, ես երկար ժամանակ չգիտեի, թե ինչ էր ստեղծագործում: Միայն վերջերս, Հուլի վարժապետյանի ֆրանսերեն թարգմանությունների շնորհիվ, բացահայտեցի նրա գրական աշխարհը եւ հասկացա, թե որքան ժամանակակից մտածող էր նա: Ավելի ուշ նաեւ իմացա, որ Հայաստանում նա շատ հայտնի է: Առաջին այցելության ժամանակ անցանք մի քաղաքի միջով, որտեղ մի դպրոց կրում էր նրա անունը: Չեն հիշում, թե որ քաղաքում էր, բայց դա ինձ մեծ հպարտություն պատճառեց:

-Իսկ հայկական ավանդույթներն ու ոգին ինչպե՞ս վերադարձան ձեր կյանք:

-Դա տեղի ունեցավ շատ ավելի ուշ: Կարծում եմ՝ ամեն ինչ սկսվեց Փարաջանովի դատավարության ժամանակ: Ֆրանսիայում նրա

Ժո Կորբո. Ֆրանսիական ռեզգիի հայկական ձայնը

պաշտպանության համար մեծ շարժում էր սկսվել՝ ցույցեր, տարբեր նախաձեռնություններ: Ես միացա այդ շարժմանը, որովհետեւ տեսել էի նրա ֆիլմերը, որոնք, որպես արվեստագետի, խորապես հուզել էին ինձ: Հատկապես «Նռան գույնը» ֆիլմը: Հենց այդ ժամանակ սկսեցի ճանաչել մեծ աշուղ Սայաթ-Նովային եւ շատ ավելի լրջորեն հետաքրքրվել հայ մշակույթով:

Այդ տարիներին կար նաեւ մի հրաշալի խումբ՝ «Ջարթոնք» անունով, որը հայկական փոփ երաժշտություն էր կատարում, դա ինձ չափազանց հետաքրքրական էր թվում: Այդպես աստիճանաբար նորից մոտեցա իմ մշակութային արմատներին: Այդ գործում մեծ դեր ունեցավ նաեւ քույրս: Նա ինձնից շատ ավելի էր կապված հայությանը: Սովորել էր կարդալ-գրել հայերեն, հաճախում էր համալսարանական դասընթացների: Ամեն անգամ, երբ գնում էի նրա մոտ, նա համառորեն ինձ հետ միայն հայերեն էր խոսում, որպեսզի օգնե, որ լեզուն վերագտնեի: Այդպես կամակամաց նորից սկսեցի հասկանալ հայերենը:

-Իսկ այդ հայկական ոգին փոխանցե՞լ եք ձեր զավակներին:

-Իհարկե: Կինս մոր կողմից մարդկացի է, հոր կողմից՝ սենեգալցի: Նա առանձնապես հավատացյալ չէ, բայց շատ հոգեւոր մարդ է: Երկուսս էլ ունենք շատ համամարդկային ընկալում հոգեւոր կյանքի մասին: Աղջիկներս հայերեն չեն խոսում, միայն մի քանի բառ: Սակայն ճակատագիրն այնպես տնօրինեց, որ երկու փեսաներս էլ հայ են: Ես այդ ուղղությամբ ոչինչ չէի արել: Աղջիկներս երբեք հայկական դպրոց չեն հաճախել



եւ գրեթե չեն մասնակցել համայնքային կյանքին: Կրտսեր աղջիկս՝ Օռնելան, մի ժամանակ չորեքշաբթի օրերին գնում էր հայ եկեղեցու դասընթացներին՝ լեզուն սովորելու, բայց շուտով ամբողջովին տարվեց ձիավարությամբ եւ դադարեց հաճախել:

Մի օր ավագս՝ Անաստասիան, ասաց. «Ուզում եմ քեզ ծանոթացնել իմ ընկերոջ հետ»: Դա Միսաքն էր, հրաշալի մի երիտասարդ: Հետո Անաստասիայի ծննդյան օրը Միսաքը հրավիրեց իր ընկերներին, որոնց մեջ էր Մաքսիմը: Այսօր նա իմ թոռնիկ Բիլիի հայրն է: Իսկ Միսաքն ու Անաստասիան ունեն փոքրիկ որդի՝ Երազ անունով: Ամենահետաքրքիրն այն է, որ մեր ընտանիքների միջեւ

կապը շատ հին է: Մաքսիմի պապը՝ Ղազարյան ընտանիքից, երիտասարդ տարիներին եղբորս՝ Օննիկի, ամենամոտ ընկերն էր, իսկ մեծ մորաքույրն՝ իմ քրոջ շատ մտերին ընկերուհին:

-Եվ ինչպե՞ս էր հայաստանյան ձեր երկրորդ ուղեւորությունը:

-Բախտս բերեց՝ ունենալով Միսաքի պես հրաշալի ուղեկից, որն ամեն ինչ մանրամասն կազմակերպել էր: Մենք մեքենա վարձեցինք, եւ նա վարեց գրեթե 1200 կիլոմետր: Նրա շնորհիվ բացահայտեցինք իսկապես կախարդական վայրեր:

Այցելությունս Մատենադարան ինձ խորապես հիացրեց եւ հուզեց: Այնքան գեղեցիկ էր... Այդ պահից սկսեցի ավելի մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել հայկական մշակույթը: Անսահման տպավորվեցի հայկական վանքերի գեղեցկությամբ՝ Էջմիածնում, Տաթևում... Այցելեցինք նաեւ մի վայր, որը վաղուց էի երազում: Պարզապես հմայվեցի Քարահունջով. այդ հնագույն վայրը համամարդկային նշանակություն ունեցող հուշարձան է: Այն ինձ հիշեցնում է Անգլիայի Սթոունհենջը կամ Բրետանի Կառնակի մեգալիթյան համալիրները: Աշխարհի տարբեր ծայրերում կան նման հնագույն մեգալիթյան վայրեր, որոնք միշտ խորին հուզմունք են պատճառում ինձ:

Եվ վերջապես, ամենից շատ ինձ զարմացրեց Հայաստանի բնության անհավանական բազմազանությունը՝ խոր կիրճերը, լեռները, ժայռերը, որոնք երբեմն բնական քանդակների են նմանվում: Հենց այստեղ ես իսկապես հասկացա հայկական հայտնի ասույթի իմաստը՝ «Մենք ենք, մեր սարերը»...

ՄԱՅԵԼ ՌՈՒԲԻՆ

«Middle East Forum»-ում հաղափառական վերլուծության կենտրոնի suortén

Եթովպիայի հայկական համայնքը թեև փոքր է, բայց մեծ դեր է խաղացել երկրի արդի պատմության մեջ: Մինչ դարեր շարունակ հայ դիվանագետներ եւ առեւտրականներ են այցելել Եթովպիա, 19-րդ դարի վերջերին էր միայն, նախքան Հայոց ցեղասպանությունը, որ ավելի կայուն հայկական առեւտրային համայնք է ստեղծվել Ադիս Աբեբայում, որը շուտով իր շարքերը լրացնելու էր Օսմանյան բռնություններից մազապուրծ հայերի հոսքով: Հայերը, ընդհանուր առմամբ Եթովպիայում հանգիստ կյանք են վարել:

Հայաստանի նման, Եթովպիան քաղաքակրթական պետություն է: Հայաստանը 301 թվին դարձավ առաջին քրիստոնյա թագավորությունը, իսկ Ակսումը կամ Ակսումի պետությունը, որ Եթովպիա դարձավ հետագայում, հետեւեց նրան՝ ընդունելով քրիստոնեությունը մի քանի տասնյակ տարիներ անց: Ինչպես հայկական Առաքելական եկեղեցին, Եթովպիայի ուղղափառ եկեղեցին քրիստոնեության ամենահին հոգեւոր հաստատություններից մեկն է: Երկու եկեղեցիներն էլ դավանում են միեւնույն աստվածաբանությունը եւ մերժում են մ.թ. 451 թվի Քաղկեդոնի տիեզերական ժողովի դրույթները:

Մինչեւ 1974 թվը, երբ կոմունիստները գահընկեց արեցին կայսր Հայլե Սելասիեին (1930-1974), եթովպիացիները հայերին մեծ տեղ էին հատկացնում իրենց երկրում: Հայերը Մենելիք II կայսեր օրոք (1881-1913) բարձր պաշտոններ էին զբաղեցնում: Նրանք եկեղեցիներ եւ վարժարաններ էին կառուցել, որոնք հիմք էին հանդիսացել, որ Եթովպիա-հայկական մշակույթը ծաղկունք ապրի:

Մարքսիստները ահ ու սարսափի մթնոլորտ առաջացրին՝ առգրավելով մասնավոր սեփականության կառույցներ: Ազգայնավեցին հայկական վարժարանները եւ մինչ ուղղափառ եկեղեցու պաշտամունքը թուլատրվեց, հայկական (առաքելական) եկեղեցապատկան գույքը առգրավվեց՝ լարվածություն ստեղծելով հայկական եւ եթովպիական համայնքների միջեւ:

ՀԲԸՄ-ն ժամանակին անդրադարձել է Ադիս Աբեբա եւ Հարեր քաղաքների հայկական համայնքների դժվարին կացությանը՝ վերջին 50 տարիների ընթացքում: Թվերն ինքնին խոսում են այդ մասին: Եթովպիայի հայկական բնակչությունը 1.600 հոգուց զգալիորեն նվազել է՝ հասնելով ընդամենը 120-ի կամ նույնիսկ ավելի պակաս: Սբ. Գեորգի հայկական առաքելական եկեղեցին հիմնականում փակված է: Աշակերտների թվի նվազումը ստիպել է համայնքային Գեորգով ազգային վարժարանի դռները բացել նաեւ եթովպիացի երեխաների առաջ, սակայն դա էլ չի օգնում:

1991-ի մայիսի 28-ին կոմունիստական ռեժիմը ի վերջո տապալվեց եւ Եթովպիայի հեղափոխական ժողովրդավարական ճակատը գրավելով մայրաքաղաքը, անցավ իշխանության գլուխ: Տարբեր կրոններ դավանող բնակչությունը ողջունեց կատարվածը: Մեկես Չենաուի կառավարությունը կազմեց եւ իշխեց մինչեւ իր մահը 2012-ին: Նրան հաջորդեց Հայլեմարիամ II Դեսալենը: Ներկա վարչապետն է Աբիյ Ահմեդ Ալին, որ Եթովպիան կա-

Եթովպիայի հայ համայնքի ղախողանման համար ՀՀ-ն ղեկ է հեռի Հունաստանի օրինակին



ռավարում է 2018-ից: 2019-ին նա արժանացել է խաղաղության Նոբելյան մրցանակի:

Եթովպիահայերի խնդիրը ներկա պայմաններում այն է, որ չնայած կոմունիստական վարչակազմի տապալմանը, երկրում չի վերացել վերահսկողության եւ կենտրոնական ծրագրավորման մտայնությունը: Թեւ ժողովրդի մեծամասնությունը արհամարհում է կոմունիստական վարչակազմի տարիները, նրանց հաջորդած կառավարությունները, այդուհանդերձ, իրենց ձեռքերում են պահել հայերից առգրավված ունեցվածքը: Սահմանադրությունը նաեւ թույլ է տալիս կառավարությանը խլել եւ քանդել որոշակի սեփական հաստատություններ՝ հանուն հանրային շահի: Եթովպիայի ներկա կառավարությունը կարծես տարված է Ադիս Աբեբան աֆրիկյան Դուբայի վերածելու մարմաջով: Մայրաքաղաքը արդիականացնելու նպատակով Աբիյը ցանկանում է իրականացնել խիզախ մի ծրագիր, որի շրջանակներում արդեն իսկ հողին են հավասարեցվել հին Ադիս Աբեբայի բազմաթիվ շինություններ, ներառյալ Արմեն Սեֆերը, հայկական հիմնավորը տեղանքը, որպեսզի տեղ ազատվի բարձրահարկ երկնաքերերի, աշտարակների եւ այլ արդիական կառույցների համար:

Թեւ, բարեբախտաբար, լայնատարած խտրականություն կամ հայատյացություն չկա երկրում, ինչպես ասենք՝ Թուրքիայում եւ Ադրբեջանում, Եթովպիայի բյուրոկրատները, առանց պատմությունից քիչ թե շատ տեղյակ լինելու կամ գնահատելու մշակույթների բազմազանությունը, տրամաբանական չեն գտնում, որ հայկական համայնքին թույլատրվի պահպանել տարածքներ, որոնց չեն կարողանում ապահովել բավականաչափ ներկայություն: Այդ կապակցությամբ ճնշումներ են կատարվել, որպեսզի հայերը կամ այդ տարածքները հանձնեն կառավարությանը, կամ էլ, հատկապես վարժարանների պարագայում, գրկվեն վարչական վերահսկողությունից: Աբիյը մեծ նորարար է պատկերացնում իրեն, նմանակը Եթովպիայում Բարոն Ժորժ-Էռեստ Հաուսմանի, ով 19-րդ դարի սկզբներին վերակառուցեց Փարիզը: Կրոնական հավատարմության մեջ էլ նա նորարարության կողմնակից է եւ ուղղափառ եկեղեցու հին ավանդույթներին հետեւելու փոխարեն նախընտրում է փորձարկել ավելի եռանդուն հոգեգալստյան քրիստոնեությունը:

Բայց եթե Աբիյը ցանկանում է վերա-

փոխվել, ապա նա կարող է ջանքեր գործադրել հասարակությանը կոմունիստների հասցրած վնասները վերացնելու ուղղությամբ: Փոխանակ թույլ տալու, որ 20-րդ դարի ամենավայրագ վարչակազմի պատճառով էլ ավելի նոսրանա ու թռչնի, նա պարտավոր է վերահարձնել հայկական բռնագրավված սեփականությունները: Այդպիսով նա նոր շունչ կհաղորդի համայնքին, որն այդքան շատ բան է արել կառուցելու Ադիս Աբեբան եւ քաղաքում ձեւավորելու կոսմոպոլիտ մշակույթը:

Երեւանի դիվանագիտական աջակցությամբ Եթովպիայի հայկական համայնք կարող է գոյատևել: Այդ հարցում Հունաստանի օրինակը կարող է օգտակար լինել: 2023-ին Եթովպիայի կրթության նախարարությունը Ադիս Աբեբայում գործող Հելլենիստական միջազգային վարժարանին դատի տվեց՝ պահանջելով ենթարկվել պետության կազմակերպչական ստանդարտներին եւ հրաժարվել համայնքային կառավարումից: Երկրի բյուրոկրատները նաեւ մեղադրեցին վարժարանին, որ անգլերենի ուսուցման շահութաբեր կենտրոնը պատշաճ մակարդակով չի կատարում իր հարկային պարտավորությունները: Հուլյանի մոտ կառավարության այս քայլը զուգահեռներ առաջացրեց Թուրքիայի հետ, որտեղ հունական վարժարաններին եւ սեմինարիաներին տիրանալով իրականացվում էր մշակութային դանդաղ ցեղասպանություն ընդդեմ հույն ուղղափառ համայնքի:

Երբ Եթովպիայի ֆեդերալ գերագույն դատարանը հարկադրեց պետական վերահսկողություն սահմանել վարժարանի նկատմամբ, Հունաստանի արտգործնախարարությունը զուսպ, բայց հրատապ դիվանագիտական քայլեր ձեռնարկեց, որին ուղեկցեցին արտգործնախարարների տեղակալների մակարդակով այցելություններ, որոնք ի վերջո 2025-ի դեկտեմբերին համաձայնության եկան վարժարանը հռչակել հունական համայնքի մշակութային ժառանգությունը պահպանող օջախ, երաշխավորելով նրա ինքնուրույն գործելու իրավունքները:

Գիշտ է, հայկական համայնքը փոքրինչ տարբեր խնդիրներ ունի, բայց մշակութային ունեցվածքի վերահանձման եւ ինքնուրույն գործունեություն ծավալելու իրավունքի նախադեպը մնում է անհերքելի փաստ: Մինչ հայաստանյան քաղաքացիական ընկերություններ եւ սփյուռքահայ կազմակերպություններ փորձում են պահպանել Լ. Ղարաբաղի եւ Երուսաղեմի մշակութային ժառանգությունները, նրանք, ՀՀ արտգործնախարարության օժանդակությամբ չպետք է անտեսեն Եթովպիայի հայ համայնքի առաջ ծառացած խնդիրները: Աբիյը կարող է արձագանքել, բայց միայն այն դեպքում, եթե նրանից պահանջեն:

Անգլ. բնագրից թարգմանեց
ՀՄԳՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ
(The Arm. Mirror-Spectator)

Իմաստաբանական բառարան

«Ուրիշ ամսեր են
«ՆՄԵԼ» սարերին...»

Համո Մահյան

Մարդկանց ու կենդանիների տարբերակելը դժվար չէ:

Մարդիկ խոսում են, կենդանիները՝ ոչ:

Մարդիկ ծիծաղում են, կենդանիները՝ ոչ:

Մարդիկ երազում են, կենդանիները՝ ոչ:

Մարդիկ նստում են, կենդանիները՝ նույնպես:

Բայց ծիծերը ոչ նստում են, ոչ էլ պառկում: Նրանք կանգնած են քնում: Ծառերի մասին էլ գիտենք, որ կանգնած են մահանում:

Մյուս կենդանիները նստում են դժվարությամբ եւ, ասենք, ոչ այնքան մարդավայել: Ավելի ճիշտ՝ մարդիկ են կենդանիների վրա նստում ու քշում:

Սակայն հայերի մոտ երբեք «էլին նստած» լինելը հարգի չի եղել: Ընդհակառակը՝ այդ արարքը մեր ժողովրդի պատկերացմամբ «աիբ», այսինքն՝ անոթ է համարվել: Դեռ ավելին՝ էլից իջնելն էլ է պարսավելի եղել: Որովհետեւ, երբ անոթալի քայլից հետո փորձում ես ուղղել սխալը, հաճախ ավելի ծիծաղելի վիճակում ես հայտնվում:

Իսկ պատվելի մարդուն սեփական գլխին նստեցնելը մեզանում հարգանքի բարձրագույն նշան է: Այս արտահայտությունը հյուրընկալության ու նվիրվածության գագաթնակետն է եւ, ըստ էության, նշանակում է՝ «քեզ շատ եմ հարգում»: Պատկերացնում եք՝ շողոքոթ մարդը, հսկայական տուն ունենալով, իր շեֆին հաճոյանալու համար ասում է. «Դուք իմ գլխի վրա տեղ ունեք»:

«Նստելը», որի հոմանիշներից մեկն էլ «բազմելն» է, հաճախ նշանակում է պաշտոն զբաղեցնել: Այդպիսի աթոռին նստողը, որպես կանոն, դժվարությամբ է պոկվում դրանից:

«Նստել մեկի դռանը» նշանակում է լինել խաղաղ պայմաններում: Դրա համար էլ **Չարենցը** գրել է՝ «Ա՛խ, կարծես նստած ես դռանը եւ ինձ հետ **Տերյան** ես կարդում»:

Բնական է, որ խաղաղ ժամանակներում գերմանացի գրող **Հերման Հեսսեի** «Հուլունքախաղ» վեպի փոխարեն նախընտրելի է մտերիմ մարդու հետ մեկի դռանը նստել ու «Տերյան» կարդալ:

Ժամանակին եղել է նաեւ մարդկանց մի միջավայր, որտեղ «նստած լինելը» պատվի նշան է եղել: Դրա լավագույն վկայություններից է հպարտությամբ հնչեցվող «Նստած-հեկած տղա եմ» արտահայտությունը: Մեր օրերում, կարծես, նորից ենք մոտենում այդ ժամանակներին: Միայն թե հիմա «նստած» մարդը երբեմն իր «նստելու» համար, քրեական անցյալից բացի, նաեւ քաղաքական շարժառիթներ պիտի ունենա:

Իսկ «բռնոցի-նստոցի»-ն, որը ժամանակին մանկական ամենասիրելի խաղերից էր, այսօր, ցավոք, մեր հասարակական-քաղաքական առօրյայի անբաժանելի մասն է դարձել:

ԳԲԳՐ ԱՍԵՐԵԼՅԱՆ

ՎԱՐԴԻՍԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Անվանագոյրյան հարցերով փորձագետ

Հետախուզությունը դա տեղեկատվություն ստանալու կազմակերպված միջոցառումների համակարգ է: Տեղեկատվությունը պետք է ստուգվի բոլոր մանրամասներով, համակարգվի մեկ հստակ եւ մեծ ամբողջության մեջ, որը հնարավորություն կտա կանխատեսել իրադարձությունների ընթացքը: Մառախուղի միջով ուրվագծել ապագան:

Թուրքիայի ազգային հետախուզության (MIT – Milli Istihbarat Teskilati) ղեկավարության նախաձեռնությամբ, այդ կառույցում արդեն մի քանի տարի է, ինչ հիմնադրվել է հակա «Մոսսադ» («Mossad» – Հետախուզության եւ հատուկ խնդիրների ինստիտուտ) ստորաբաժանում: Կարծում են, ընթերցողս արդեն հասկացավ, որ խոսքը գնում է Իսրայելի «Մոսսադ» հետախուզության մասին: Թուրքական հետախուզության այդ նոր ստորաբաժնում աշխատում են ամենափորձառու հետախույզները:

Ինչպես հայտնում է թուրքական «Սաբահ» լրագրի ժուռնալիստ **Շիմշեկ Աբդուրահմանը** (լրագիրը պատկանում է նախագահ Երդողանի ընտանիքին), վերոնշյալ թուրքական հետախուզության ստորաբաժանմանը հայտնի է «Մոսսադի» յուրաքանչյուր քայլը: Ըստ նույն լրագրողի «MIT»-ը աշխարհի միակ հատուկ ծառայությունն է, որը ի վիճակի «Մոսսադի» գործակալական ցանցի դեմ գործառույթներ իրացնել, հատկապես վերջին մի քանի տարիներին:

Նույն «Սաբահը» նշում է, որ 2020թ. հոկտեմբեր ամսին Թուրքիայի հատուկ ծառայություններին հաջողվել է այն բացահայտել եւ ձերբակալել 15 արաբների, որոնք հոգուտ «Մոսսադի» թուրքական համալսարաններում հետեւում եւ հսկում էին պաղեստինցի ուսանողներին:

Իսրայելը իհարկե հերքեց այդ տեղեկատվությունը՝ հայտարարելով, որ ձերբակալվածներից ոչ մեկը կապված չէր «Մոսսադի» հետ:

2023 թ. նույն «Սաբահը» մի այլ հոդված տպագրեց, որտեղ նշվում էր նոր ձերբակալված իսրայելական մի տասնյակ գործակալների մասին, որոնք մեղադրվում էին Թուրքիայի տարածքից իրանական թիրախների դեմ աշխատելու մեջ: Նույն 2023թվ. նոյեմբերին հայտնի դարձավ, որ պաղեստինյան մի հաքեր թուրքական հատուկ ծառայությունների օգնությամբ թափանցել էր իսրայելական հակաօդային պաշտպանության համակարգերի («երկաթյա գմբեթ») ծրագրերի մեջ եւ «MIT» օգնությամբ խուսափել էր իսրայելական իրավապահների ձերբանակությունից:

Վերոհիշյալ լրագրող Շիմշեկի հոդվածները «Մոսսադի» դեմ եւ նորաստեղծ թուրքական հետախուզական ստորաբաժանման վերաբերյալ, սկսվեցին տպագրվել այն բանից հետո, երբ նախագահ **Երդողանը** պաշտոնապես նախագահությանը Իսրայելին, որ Թուրքիան անտարբեր չի մնա «ՀԱՄԱՍ»-ի անդամների լիկվիդացիոն գործողությունների նկատմամբ «Թուրքիայի տարածքում»: («ՀԱՄԱՍ» - արմատական պաղեստինյան իսլամիստական շարժում, որը գործում է Գազայի հատվածում: Նապաակը՝ ոչնչացնել Իսրայելը): Ինքնիստինքյան պարզ է, որ Իսրայելի բոլոր հատուկ ծառայությունները «Մոսսադ»-ը, «Շին

Թուրքիայի եւ Իսրայելի հասուկ ծառայությունների առճակատմը սարածաւրջանում



Հաքան Ֆիդան

Բեթը», «Շաբակը», «Ամանը», «ԱԳՆ-հետախուզությունը» եւ մյուսները առաջնահերթ խնդիր ունեն «որսալ» եւ լիկվիդացնել «ՀԱՄԱՍ»-ի ղեկավարներին եւ անդամներին:

Այս ամենը շատ ավելի սրվեց եւ պայթյունավտանգ իրավիճակ ստեղծեց, երբ 2023 թ. հոկտեմբերին «ՀԱՄԱՄԱՍ»-ի մարտիկները Գազայից մտան Իսրայել, սպանեցին ավելի քան 1200 խաղաղ բնակիչների (ըստ Իսրայելական տվյալների) եւ գերեվարեցին 240 պատանդներին:

Իսրայելը իհարկե կազմակերպեց պատասխան ռազմական գործողություն Գազայում, որի արդյունքում սպանվեցին մի քանի տասնյակ հազար մարդիկ:

Ինչ վերաբերվում է Թուրքիային, ապա նախագահ Երդողանը «ՀԱՄԱՄԱՍ»-ի մարտիկներին անվանեց ազատագրողներ եւ հերքեց ամեն տեսակ ահաբեկչության մեղադրանքները: Այստեղ հարկ է նշել նաեւ, որ «MIT» ծառայության այսօրվա ղեկավարը **Իբրահիմ Կալինը**, ինչպես նաեւ նախկին ղեկավարը **Հաքան Ֆիդանը** (Թուրքիայի ԱԳՆ այսօրվա ղեկավարը եւ երկրի ամենաազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը) երկուսն էլ հանդիսանում են իրանամետ իսլամիստական գործիչներ:

Քաղաքագետների, վերլուծաբանների, աշխարհի տարբեր հատուկ ծառայությունների համար գաղտնի չէր, որ Թուրքիայի «MIT» հատուկ ծառայությունը, ինչպես Թուրքիայի ներքաղաքական կյանքում, այնպես էլ արտասահմանում բավականին հաջող գործառույթներ է իրականացնում: Այդ թվում եւ «PKK» քրդական կազմակերպության, գյուլենիստական (FETO)-ի եւ այլ ուղղություններով, ելնելով միայն Թուրքիայի եւ երբեմն նաեւ Ադրբեջանի պետական շահերից:

Իսրայել-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունները խզվել էին 2010թ.-ին: 2022թ. օգոստոսին դիվանագիտական հարաբերությունները այդ պետությունների միջեւ վերականգնվեցին: Սակայն Իսրայելի հետախուզական գործառույթները Թուրքիայում ոչ թե պակասեցին, այլ ակտիվացան, հատկապես Ստամբուլում: Սակայն, դա չի խանգարում Իսրայելին ստանալ իր գազը Ադրբեջանից՝ Թուրքիայի տարածքով: Նավթը լցվում է իսրայելական տանկերներ Թուրքիայի Ջեյհան նավահանգստում:

Հարկ է նշել, որ «Մոսսադի» վերլուծաբանները նպատակահարմար գտան օպերատիվ խնդիրները տարածաշրջանում լուծելու համար հավաքագրել Թուրքիայի քաղաքացիներին եւ ստեղծել նոր գործակալական

ցանց: Սա խիստ անհանգստացրեց Թուրքիայի ղեկավարներին. նրանք զնահատեցին Իսրայելի այդ քայլը, որպես Թուրքիայի ինքնիշխանությանը սպառնալիք: Բայց Թուրքիան իսրայելական գործակալական ցանցերը բացահայտելու համար չբավարարվեց միայն իր տարածքում հակահետախուզության ակտիվացմամբ: Թուրքիայի հետախուզությունը ակտիվացրեց նաեւ համագործակցությունը Արեւմտյան Ասիայի եւ արա-



Իբրահիմ Կալին

բական աշխարհի երկրների հատուկ ծառայությունների հետ:

Որպես նախկինում ծառայած սպա (եւ հետախուզությունում, եւ հակահետախուզությունում) հաստատականորեն ընդգծում են, որ ոչ մի բան չի կարող այդպես դրական եւ արդյունավետ ազդեցություն ունենալ հակառակորդի գործակալական ցանցերը բացահայտելու գործում, ինչպես օպերատիվ-տեխնիկական համագործակցությունը շահագրգիռ գործընկեր հատուկ ծառայությունների հետ:

Այնուամենայնիվ թուրքական հատուկ ծառայությունները ազդանշան են ուղարկում բոլորին, այդ թվում եւ դաշնակիցներին, որ թույլ չեն տա ոչ մեկին կոնֆլիկտները եւ ընդհանրապես որեւէ պայքար տեղափոխել իրենց տարածք:

Որոշ վերլուծաբանները հատուկ ծառայությունների աշխարհից «MIT» եւ «Mossad»-ի միջեւ աճող հակամարտությունը անվանում են լրտեսության, հակահետախուզության եւ գեոքաղաքական լարվածության գաղտնի «պարերը»:

Կասկած չկա, որ այս լարվածությունը Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ խիստ անհանգստացնում է ԱՄՆ-ին եւ ընդհանրապես ՆԱՏՕ-ի ղեկավարությանը: Ըստ երեւոյթին նրանք (ԱՄՆ եւ ՆԱՏՕ) անում են ամեն ինչ այդ «վառողի տակառի վնասագործման» համար, հասկանալով, թե դրանք ինչ գլոբալ «սեյսմիկ հետեւանքներ» կարող են ունենալ հավաքական արեւմուտքի համար, որը իհարկե շատ ձեռնտու է Ռուսաստանին, Չինաստանին եւ Իրանին: Չի բացառվում անգամ դաշինքների վերակառուցումը եւ խոշոր փոփոխությունները Արեւելյան Միջերկրածովյան գործողությունների թատերաբեմում:


Այժմ ուզում են ընթերցողիս հրամցնել մի փոքր բացատրություն, թե ինչ է հետախուզությունը եւ ինչպես է դասակարգվում այն տարբեր պետություններում:

Մեծ Բրիտանիայում հետախուզությունը, ինչպես եւ հատուկ ծառայության գործունեության շատ այլ ոլորտներ համարվում են կարելի խաղեր եւ շեշտերը դրվում են հիմնականում մրցակցության վրա: Ընդ

որում, պայքար եւ պատերազմ ուղեղների միջեւ, ոչ թե մկանների եւ զենքերի միջեւ:

Բրիտանական հետախուզություններն իրենց աշխատանքը կառուցում են լավագույն մարդկային հատկանիշների վրա, հենվելով տոհմածառի (porodichnost - pedigree), ռոմանտիզմի եւ, իհարկե, հետախուզության համար անհրաժեշտ ավանդույթի (արկածախնդրության) վրա: (Ճիշտ է, սա միայն մասամբ է համապատասխանում Ջեյմս Բոնդի պատկերին. – հեղինակի կողմից):

Ֆրանսիայում նույնպես ինչ-որ չափով հետախուզությունը խաղ է համարվում, որտեղ ինչպես եւ այդ երկրի կառավարությունում ասվում է մի բան, բայց նկատի ունեն լրիվ ուրիշ բան: Ֆրանսիայի հետախույզները չեն ուզում վերջնական որոշում ընդունել որեւէ գործառույթում, նրանց համար գործառույթը դա գործարք է, եւ հաճախ կարելի է աչքերը փակել որեւէ այլ գործարքի շուրջ:



Ռոման Գոֆման

Ամերիկացիների համար հետախուզությունը, ինչպես եւ շատ այլ կենսական ոլորտներ, բիզնես է: Լրտեսական կազմակերպությունները նրանց համար կոնգլոմերատ են (անսահմասեռ խառնուրդի մեխանիկական միացում), որտեղ անհրաժեշտ է եւ անհատ գործիչ արվեստը եւ ամբողջ համակարգի մեթոդոլոգիան եւ էֆեկտիվությունը համակարգված հզոր տեխնիկական հնարավորություններով: Միեւնույն ժամանակ ամերիկյան հետախուզությունը փորձում է քաղաքական ռեժիմները տապալել, ֆիզիկապես ոչնչացնել կամ առեւանգել քաղաքական լիդերներին: Եվ այս բոլորը արդարացվում է մեկ գաղափարով՝ նրանք, իբր, գործում են ազատ աշխարհի եւ ժողովրդավարության սկզբունքները պահպանելու համար:

Խորհրդային համակարգում, ինչպես եւ հիմա ՌԴ-ում եւ շատ այլ ԱՊՀ երկրներում, հետախուզությունը եւ հատուկ ծառայությունը համարվում է ռեպրեսիոն գործիք, որը պետք է աշխատի գործող ռեժիմը պահպանելու համար: Առանձին անձը մի փոքր ատամնանիվ է (винтик) հիերարխիկ բյուրոկրատիայում:

Իսրայելական հետախուզությունում կարելի է որոնել եւ գտնել նշված 4 մոդելների սկզբունքները: Իսրայելի հետախուզության տեսաբանները եւ վերլուծաբանները ստեղծել են տարբեր ավանդույթների սինթեզ եւ հարմարեցնում են այդ սինթեզը իրենց ռազմավարությանը:

Թուրքական հետախուզության արմատները հայտնվել են դեռ 1299 թվին եւ հզորացել են Օսմանյան կայսրության օրոք:

«Ադրբեջանն արդեն հայաստանին փոխարինել է Ռուսաստանի մթերային շուկայում»

Հայկական ապրանքների մեծ մասի Ռուսաստան ներմուծման արգելքը որեւէ ազդեցություն չի ունեցել երկրում խանութների ապրանքատեսականի վրա, գրում է ռուսական «Ալ-ցենտի» վերլուծական կենտրոնի կայքը: Կենտրոնում հաշվարկել են, որ Հայաստանից ներմուծումն արագ փոխարինվել է Վրաստանից եւ որոշ չափով՝ Ադրբեջանից ներմուծմամբ:

Ադրբեջանական ապրանքների Ռուսաստան արտահանումը հունվար-հունիս ամիսներին, ինչպես նշվում է, աճել է 3%-ով՝ գումարային արտահայտությամբ գերազանցելով 608 միլիոն դոլարը (նույն ժամանակահատվածում Վրաստանից ներմուծումը կազմել է 332 միլիոն դոլար, իսկ Հայաստանից՝ 1,2 միլիարդ դոլար):

Ադրբեջանի գյուղատնտեսական մթերքի արտահանման հիմնական «դրոշակակիր» լուլիկ, ըստ բերված տվյալների, Ռուսաստան է առաքվել 136.000 տոննա՝ 164 միլիոն դոլար արժողությամբ: Ադրբեջանցի արտահանողների շահույթն աճել է 10%-ով՝ հայկական բանջարեղենի դուրսմղման հաշվին:

Հունիս եւ հուլիս ամիսներին՝ Հայաստանի սեզոնային արգելքի գազաթնակետին, կորիզավոր մրգերից Ադրբեջանի ընդհանուր եկամուտը գերազանցել է 40 միլիոն դոլարը: Դադստանի անցակետերով գրանցվել է կեռաս, բալ, նեկտարին եւ դեղձ տեղափոխող ադրբեջանական խոշոր բեռնատարների ռեկորդային երթևեկ: Արտահանվել է 48.000 տոննա խնձոր՝ 39 միլիոն դոլար արժողությամբ: Չնայած ծավալի աննշան նվազմանը (5.4 տոկոս), Ադրբեջանի եկամուտներն աճել են գրեթե 10%-ով՝ Կենտրոնական Ռուսաստանում մայիսյան ցրտահարու-



թյունների եւ դրա հետ կապված գների աճի պատճառով:

Ադրբեջանը զգալիորեն մեծացրել է իր ներկայությունը ձկնամթերքի հատվածում, որտեղ նախկինում Հայաստանը ուժեղ դիրք էր գրավում լճային կարմրախայտի եւ սիգ ձկան մատակարարման գործում: 2026 թվականի սկզբից ի վեր Ռուսաստանը Ադրբեջանից ներմուծել է 43%-ով ավելի ծովամթերք:

Հայկական հյութերի, հանքային ջրերի եւ նեկտարների մատակարարումների դադարեցումից հետո, լրատվամիջոցի վկայությամբ, ադրբեջանական գործարանները լրացրել են ռուսական սուպերմարկետների թափուր տեղերը: Ադրբեջանից Ռուսաստան պատրաստի շալցված արտադրանքի մատակարարումները տարվա առաջին կեսին աճել են 14%-ով:

Նշվում է նաեւ տեքստիլ արտադրանքի ոլորտում համապատասխան փոփոխության մասին: Եթե Հայաստանը Ռուսաստանին մատակարարում էր պատրաստի տրիկոտաժ,

Ադրբեջանը դարձել է ռուսական կարի արդյունաբերության հումքի հիմնական մատակարար: Ռուսական գործարանները զանգվածաբար անցնում են ադրբեջանական բամբակի՝ հանրապետությունում դրա մշակովի հողերի 15%-ով ընդլայնման պայմաններում: Ադրբեջանական մանվածքի արտահանման ֆիզիկական ծավալը տարվա առաջին կեսին արդեն կրկնակի թռիչք է գրանցել:

Տեսական տասնամիջոցների փոխարեն՝ առայժմ որոսակի սահմանափակումներ

Հայաստանը ավելի ու ավելի վստահորեն է հայացքն ուղղում դեպի Եվրոմիություն, բայց Ռուսաստանն առայժմ սկզբունքորեն մտադիր չէ պատժամիջոցներ կիրառել նրա դեմ: Այս մասին հայտարարել է ՌԴ ԳԱ համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի (ИМЭМО) գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Կոնյովը: Նրա մեկնաբա-

նությամբ անդրադարձել են ռուսական տարբեր լրատվամիջոցներ:

Փորձագետը Lenta.ru-ին տված հարցազրույցում պարզաբանել է, թե Երեւանի հետեւողական արեւմտյան կողմ-նորոշման պատճառով Մոսկվան այլեւս չի կարող Հայաստանին համարել լիարժեք դաշնակից, ինչպես նախընթաց տարիներին: Նա ընդգծել է. «Այս երկիրը գնում է Մոլդովայի, Ուկրաինայի եւ Բալթյան երկրների ճանապարհով: Երեւանն ակտիվորեն զարգացնում է կապերն ու պահպանում է շատ սերտ հարաբերություններ հենց այն երկրների հետ, որոնք ներկայումս ամենախնդրահարույցն են Ռուսաստանի համար»:

Դրանով հանդերձ, քաղաքագետի խոսքով, Ռուսաստանը սկզբունքային նկատառումներով՝ չի կիրառում տնտեսական պատժամիջոցներ հանրապետության դեմ, չնայած հարկադրված է դիմել Հայաստանից որոշակի ապրանքների ներմուծումը սահմանափակող միջոցների: 2026 թվականի զարնանը եւ ամռանը արդեն որոշումներ էին կայացվել հայկական արտադրանքի որոշակի կատեգորիաների մատակարարման վրա սահմանափակումներ կիրառելու մասին: Սա տեղի է ունենում հանրապետությունում պարենային ճգնաժամի սրման ֆոնին, որտեղ հուլիսի վերջի տվյալներով՝ ցորենի ինքնաապահովումը չի գերազանցում 20%-ը, իսկ լոբազգիների մասով՝ 3-5%-ը:

Ընդսին, նկատում է քաղաքագետը, Մոսկվան պահպանում է սպասողական դիրքորոշում՝ նախընտրելով չսրել հարաբերությունները Երեւանի հետ, չնայած Եվրոմիության հետ նրա մերձեցմանը: Սակայն, ինչպես նշել է Կոնյովը, Հայաստանի իշխանությունների հետագա արտաքին քաղաքական կուրսը կարող է ազդել երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների բնույթի վրա:

Գ. Մ.

⇒7 Նախագահ Երդողանի օրոք Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ֆունդամենտալ փոփոխություններ տեղի ունեցան, հետեւապես այդ փոփոխությունները պետք է տեղ գտնեին նաեւ հետախուզությունում: Թուրքիայի այսօրվա հետախուզական գործառնությունները ցուցաբերում են նրա արագ եւ ճկուն աշխարհաքաղաքական ծրագրերը:

Հաքան Ֆիդանի հետախուզության պետ նշանակվելուց հետո «MIT»-ը հայտնվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջավոր դիրքերում: 2012 թվին, շնորհիվ Ֆիդանի, «MIT»-ում ստեղծվեց միջազգային գործառնությունների բաժինը եւ ռադիոէլեկտրոնային հետախուզությունը ռազմական գերատեսչությունից անցավ «MIT» կառույց: Ֆիդանը Երդողանից ստանում էր «հատուկ հանձնարարություններ» եւ մեծ մասամբ հաջողությամբ իրականացնում դրանք: Իզուր չէր, որ նախագահ Երդողանը Ֆիդանին անվանակոչեց «Իմ գաղտնիքների պահապանը...»:

2023 թվին Երդողանը վերընտրվելուց հետո, իր գաղտնիքների պահապան Հաքան Ֆիդանին նշանակեց արտաքին գործերի նախարար, իսկ Իբրահիմ Կալինին (ազգային անվտանգության հարցերով խորհրդականին) նշանակեց «MIT»-ի ղեկավար: Այս նշանակումներով Երդողանը հասկացրեց աշխարհին, որ «բազմները» առա-

Թուրքիայի եւ Իսրայելի հասուկ ծառայությունների առճակատումը սարսափազդանում

վելություն ստացան հետախուզության եւ դիվանագիտության հարցերում...

Հողվածի վերջում մի երկու խոսքով ուզում են անդրադառնալ Իսրայելի կառավարության կողմից «Հայոց ցեղասպանության ճանաչման նախագծին»: Իսրայելում մի քանի անգամ է քննարկվել այդ հարցը, բայց երբեք ճանաչման փուլին չի հասել: Իսրայելի արտգործնախարար **Գիդեոն Սաարը** հայտարարեց, որ այդ ճանաչումը «բարոյական եւ պատմական պարտականություն է» իրեական պետության համար, որի ժողովուրդը II համաշխարհային պատերազմի ժամանակ «Հոլոքոսթ»-ի միջով է անցել:

Անկարան իհարկե անմիջապես հերքեց Ցեղասպանի «պիտակը»: Թուրքիայում մտավորականները համոզված են, որ Իսրայելի կառավարության այս քայլը արված է Գազայի մեջ իրենց իրականացրած գործողություններից ուշադրությունը շեղելու նպատակով: Ադրբեջանը նույնպես դատապարտեց այդ որոշումը եւ հայտարարեց, որ դա «պատմական փաստերի աղավաղում է» եւ չի նպաստում տարածաշրջանում խաղաղություն հաստատելուն:

Մեծ հարցական է. արդյո՞ք այս որոշումից հետո Իսրայել-Հայաստան հա-

րաբերությունները կբարելավվեն: Հայաստանի կառավարությունը առանձնապես չի մեկնաբանում Իսրայելի այս քայլը: Ինչ վերաբերում է Քնեսեթին – Իսրայելի պառլամենտին,- այնտեղ իհարկե կլինեն դեբատներ, բայց ամենայն հավանականությամբ որոշումը կվավերացվի:

Եվ այսպես՝ իսրայելական այս որոշումը (28 հունիսի 2026թ. պատմական իրադարձություններից 1 դար հետո) ճանաչել 1915թ. ցեղասպանությունը, բոլորովին էլ Հայաստանի եւ այստեղ ապրող հայերի համար չի արվում: Ավելի շուտ աշխատանք է տարվում, որպեսզի հայկական լոբբին ԱՄՆ կոնգրեսում խանգարի ԱՄՆ-Թուրքիա ռազմա-արդյունաբերական համալիրի համագործակցությունը:

Իսրայելին հատկապես անհանգստացնում է F-35 ամերիկյան կործանիչների արտադրության հիմնումը Թուրքիայում: 2է՞ որ **Նեթանյահուն** հայտարարում է, որ Իսրայելը պետք է դառնա «սուպեր Սպարտա», որն ի վիճակի կլինի դիմակայել տարածաշրջանի յուրաքանչյուր պետության «Ձինված ուժերին», առանց ամերիկյան օգնության:

Ե՞նչտ է այս վարկածը, թե չէ, միգու-

ցե կան եւ այլ վարկածներ, սակայն մի բան ակնհայտ է, Հայոց ցեղասպանության փաստը դառնում է քաղաքական մանիպուլյացիաների գործիք...

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀՆԼ ԹԵՔԵՅԱԼ»
սոցիալ-մշակութային
հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒ ՄԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն(գովազդ)
հեռ. **091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի միւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելոււ են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսոււմ ու չեն վերադարձոււմ:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960